1894 ՅՈՒԼԻՍԻ 15 (27) ՈՒՐԲԱԹ

Հրատարակվում է չորեքշաբթի, ուրբաթ և կիւրակի օրերը։
Տարեկան գինն է 10 ռուբլի, կէս տարուանը 6 ռուբլի, 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.։
Առանձին համարը 7 կոպէկ։

Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը և կենդրոնական գրավաճառանոցում։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Ардзаганкъ".
կամ՝ Tiflis, Rédaction „Ardzagang."

№ 80 — ՏԱՍՆԵՒԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ — № 80

ԱՐՁԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

1894 ՅՈՒԼԻՍԻ 15 (27) ՈՒՐԲԱԹ

Խմբագրութիւնը բաց է ամենայն օր 10—1 ժամ (բացի կիրակի և տօնի օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲԱՑՈՒԱԾ Է ԿԷՍ ՏԱՐՈՒԱՅ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ԱՐՁԱԳԱՆՔ"

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՅՈՒԼԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ը ՊԷՏՔ Է ՎՃԱՐԵԼ 6 ռ.

Բաժանորդագրութիւնն ընդունվում է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Վելիամինովսկի փողոց, № 22, տուն Խանդալամեանի) և «ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ»։

Օտարաքաղաքացիք պէտք է գրեն՝ Тифлисъ, Редакція „Ардзаганкъ". Իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien «Ardzagang»։

Յայտարարութիւններ ընդունվում են հայերէն և օտար լեզուներով։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներսիսեան դպրոցի նոր հոգաբարձութիւնը։
ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Ներս. դպր. հոգաբարձուների ընտրութիւնը։ Բագուից։ Խօլերան Պետերբուրգում։ Դերբէնդի նաւահանգստի ուրուագիծը։ Վարկային մասնաւոր հաստատութիւնների հարկի ենթարկելու խնդիրը։ Դրօղնալի կերոսինի համար պահեստներ։ Սեզոնի կոչուած տոմսակներ։ Պ. Ֆրիդէ։ Նոր տեղեկութիւններ «Վլադիմիր» շոգենաւի խորտակման մասին։ Առողջապահական և ժողովրդագրական VIII միջազգային համաժողով Բուդա Պեշտում։
ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ
ԹԵՐԹՕՆ. — Ներսիսեան դպրանոցի 12 նորընտիր հոգաբարձուները։
ՖԵԼԻԵՏՕՆ.—Լուսմա։
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.—Մանկապարտէզներ։
ԸՆԴԻՄԽՕՍՈՒԹԻՒՆ. — Նամակ խմբագրութեան։
ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՀԵՌԱԳԻՐՆԵՐ
ԶԱՆԱԶԱՆ
ՏԵՂԵԿԱՏՈՒ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ ՆՈՐ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆԸ

Թիֆլիզի Ներսիսեան դպրանոցը վերջին օրերս աղմկալից ընտրական պայքարի ասպարէզ էր դարձել... Այդ մրցման ամբողջ ընթացքին մենք հետեւեցինք — խոստովանում ենք առանց ջերմ մասնակցութեան—և հնար եղածին չափ լոյս ձգեցինք տեղի ունեցած երեւոյթների վրայ։ Այժմ արդէն վերջացած է այդ մրցումն և կայացել է նոր հոգաբարձուաց ընտրութիւնը։

Պնդելով հանդերձ որ պատգամաւորների ընտրութիւններն անկանոն էին և մի շարք տխուր գեղծումներ են տեղի ունեցել, համոզուելով որ այդ գեղծումների ամենագլխաւոր օժանդակիչ պայմաններից մէկն է հոգևոր իշխանութեան թուլութիւնը, որ չկարողացաւ նոյն իսկ իր կանոնագրութեան հիմունքները հաստատ պահել, և զգալով որ այդ խնդրի լուծումը բարձր է այն մամուլի ձեռնհասութիւնից, որ խիստ խտրութիւն է դնում գործադրելիք միջոցների մէջ, մենք նոր հոգաբարձական ընտրութիւնն ընդունում ենք իբրև մի fait accompli, իբրև մի կատարուած փաստ։

Հայոց մամուլի ներկայացուցիչների մի մասը ցանկանում էր անպատճառ նոր մարդիկ տեսնել Ներսիսեան դպրանոցի հոգաբարձութեան պաշտօնում, և ահա 12 նորընտիր հոգաբարձուաց անունների շարքում երևում են այնպիսի նորագոյն անուններ, որոնց մասին շատերը, նոյն իսկ ընտրողները, տեղեկութիւն չունէին. նոյն ցուցակի մէջ երևում են երեք ազգանուններ այնպիսի անձանց, որոնք երկար տարիներ շարունակում են հոգաբարձու լինել Ներսիսեան դպրանոցում։ Ուրեմն նորութեան սկզբունքն այնքան էլ հաստատ չպահպանուեց, նոր գինին մասամբ պիտի պահուի հին տկերում և հին գինին նոր տկերում, այնու ամենայնիւ ի հարկէ ծանրակշիռ է նորի կողմը, որովհետև այդ կողմը ոչ միայն մեծամասնութիւն է կազմում, այլ և հինն իր վերանորոգութեամբ պարտական է միայն նորի եռանդին և գործունէութեանը։

Ուրեմն փաստ է որ Ներսիսեան դպրանոցն այսօր ունի նոր հոգաբարձութիւն և մենք նրան ողջունում ենք նոյն սիրով և անկեղծութեամբ, ինչպէս ամեն մի կօլլեգիական վարչութեան, որին յանձնված է հասարակական որ և է գործի ղեկը։

Հին հոգաբարձութեան ջերմ պաշտպաններից չլինելով, խոստովանելով որ նրա օրով կատարուել են դպրանոցում մի շարք սխալներ, միևնոյն ժամանակ մենք պիտի ընդունենք որ այդ հոգաբարձութիւնը կազմուած է եղել այնպիսի անդամներից, որոնք ունեցել են իրենց անցեալը և ներկան, որոնք եղել են անշահախնդիր և որոնք ամենայն մի դէպքում ցոյց են տուել իրենց անձնանուիրութիւնը Ներսիսեան դպրանոցի համար։ Այդ հոգաբարձութեան մէջ մենք տեսել ենք մեր բարդ կեանքին լաւ ծանօթ բարձրագոյն կրթութեամբ մարդիկ, որոնք արդէն յայտնի ծառայութիւններ են մատուցել իրենց ազգին, և որոնց ներկայութիւնը մեր հասարակական բարդ պայմանների մէջ անհրաժեշտ է։

Նորընտիր հոգաբարձուաց շարքում նոյնպէս կան համալսարանական մարդիկ։ Նրանց ընտրական պայքարը մեզ հաւանելի չէր, նրանք աւելի անյայտ և անփորձ մարդիկ են. սակայն մենք կըցանկանայինք հաւատալ, որ նրանք նոյն ազնւութեամբ կըշարունակեն գործը՝ մտցնելով նրա ընթացքի մէջ քիչ աւելի կենդանութիւն։

Մենք ամենևին չենք կասկածում և հաստատ գիտենք որ նոր հոգաբարձութեան օրով էլ կը գտնուին անդամներ, որոնք մանկավարժական և նոյն իսկ տարրական կրթութիւնից զուրկ լինելով՝ իրաւունք կը համարեն իրենց մանկավարժական պատուէրներ տալ մանկավարժ ուսուցիչներին և տեսուչներին. սակայն այդ և այլ շատ հանգամանքներում մեղաւոր է ոչ թէ նոր կամ հին հոգաբարձութիւնը, այլ դպրանոցի կազմակերպութիւնը, հոգաբարձական և ուսուցչական իրաւանց սահմանների անորոշութիւնը։

Հին հոգաբարձութիւնը շատ քիչ է աշխատել, կամ բոլորովին չէ աշխատել այդ կազմակերպութեան սիստեմի մէջ փոփոխութիւններ մտցնել, նոր հոգաբարձութիւնը նոյնպէս, դատելով նրա օրգանի խօսքերից, չէ մտածում այդ, որովհետև իր առաջին կատարելիք գործն է համարում նոր շինութիւնը և կալուածների եկամուտների աւելացնելը։

Ինչ ուղղութիւն կը ստանայ նոր հոգաբարձական մարմնի գործունէութիւնը, այդ մենք չգիտենք, բայց պարտք ենք համարում այժմէն իսկ յիշեցնել նորընտիր հոգաբարձուներին, թէ Ներսիսեան դպրանոցի նպատակն է արժանաւոր հոգևորականներ և ուսուցիչներ պատրաստել հայ ազգի համար և այդ նպատակից ոչ մի հոգաբարձութիւն իրաւունք չունի շեղուելու։

Այսպիսով մենք ողջունում ենք նոր հոգաբարձութեան, յայտնելով նորան այժմէն իսկ՝ որ նրա իւրաքանչիւր խելացի և ազնիւ քայլը մենք կըհանդիպենք ուրախութեամբ և յարգանքով, իւրաքանչիւր սխալը ներողամտութեամբ և անկեղծութեամբ և իւրաքանչիւր կեղծիքն ու սուտը՝ անխնայ հալածանքով ու մտրակով։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ամսոյս 12-ին, երեքշաբթի, Ներսիսեան դպրանոցի դահլիճում Արքայազն Առաջնորդի նախագահութեամբ կայացաւ Ներսիսեան դպրանոցի հոգաբարձուների ընտրութիւնը։ Դահլիճում ներկայ էին 61 պատգամաւորներ։ Տոմսակներով քուէարկութեան առաջարկուեցին հետևեալ անձինք. —Պ. պ. Յ. Սպենդիարեան, Մ. Թամամշեան, Պ. Մելիք-Ղարագեօզեան, Ա. Քալանթար, Ի. Բուդաղեան, Ս. Բալաղեանց, Յ. Ալիխանեան, Կ. Քոչարեանց, Յ. Թադէոսեանց, Ա. Մելիք-Ազարեանց, Ս. Յարութիւնեանց, Յ. Լօրիս-Մելիքեան, Գ. Սունդուկեանց, Գ. Աղէլխանեանց, Գ. Բայանդուրեանց, Մ. Կարապետեանց, Գ. Ստեփանեանց, Գ. Փրիդոնեանց, Յ. Տուվիանեան, Ս. Քալանթարեան, Կ. Մելիք-Ադամեան և բժշ. Տէր-Գրիգորեան։

Պ. պ. Սունդուկեան և Աղէլխանեան հրաժարուեցին քուէարկուելուց. Քուէարկութեան հետևանքից երևաց որ հոգաբարձուներ են ընտրուած՝

Յովհաննէս Ալիխանեան	49 ձ.	12 ս.
Միքայէլ Թամամշեան	48 »	11 »
Յովհան. Սպենդիարեան	46 »	15 »
Պ. Մելիք-Ղարագեօզեան	44 »	16 »
Կարապետ Քօչարեան	44 »	17 »
Սամսոն Յարութիւնեան	44 »	17 »
Սամուէլ Բալաղեան	43 »	17 »
Յակոբ Թադէոսեան	43 »	17 »
Աղէք. Մելիք-Ազարեան	42 »	18 »
Իսահակ Բուդաղեան	42 »	18 »
Աղէքսանդր Քալանթար	41 »	19 »
Բժ. Յ. Լօրիս-Մելիքեան	41 »	19 »

Կանդիդատներ ընտրուած են բժ. Եփրեմ Աղամալեան, Լևոն Եղիազարեան, Նազարէթ Տիգրանեան և Յովսէփ Ամիրխանեան։

***

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են.

—Կիւրակէ, յուլիսի 10-ին, տեղի ունեցաւ Սև ծովի ալիքներին զոհ գնացած պ. Գրիգոր Թումայեանի թաղումը։ Թաղմանը ներկայ էր ահագին բազմութիւն Բագւում գտնուող բոլոր ազգերից։ Հանգուցեալի դագաղը եկեղեցուց հասցրին բարեկամները և ծանօթները մինչև ծովափ, իսկ այստեղից ուսների վրայ տանում էին հանգուցեալի անունով «Գրիգոր Թումայեանց» շոգենաւի նաւաստիները։ Քաղաքային ինքնավարութեան ներկայացուցիչները, ձայնաւորները, վարչութեան անդամները և քաղաքագլուխ Իբէգկին ներկայ էին թաղման. ներկայ էին նոյնպէս այն բոլոր հաստատութեանց ներկայացուցիչները, ուր պ. Գրիգոր Թումայեան վարել է զանազան պատուաւոր պաշտօններ։

***

Մայրաքաղաքի լրագրներում տպագրուած տեղեկութիւններից երեւում է որ Պետերբուրգում խօլերան ահագին զոհեր է տանում և հետզհետէ աւելի սաստկանում է։ Վերջին տեղեկութիւններից երևում է որ յուլիսի 5-ից մինչև 6-ը, մի օրուան մէջ, զանազան հիւանդանոցներում մեռել են խօլերայից 93 հոգի։ Այդ օրը հիւանդանոցներում գտնուել են 787 հիւանդներ, նոր աւելացել են 197, դրանցից առողջացել են 78 հոգի, մեռել են 93, մնում են հիւանդանոցում 813 հիւանդներ։ Մի օր առաջ, այն է յուլիսի 4-ին հիւանդանոցում գտնուել են 635 հիւանդներ, աւելացել են դրանց վրայ 196, բժշկուել են 39, մեռել են 79, մնացել են հիւանդանոցում 713։ Համեմատելով այդ թուերը, տեսնում ենք որ մի օրուան ընթացքում հիւանդների թիւը աւելացել է մի հարիւրով (713—813), որ ի հարկէ բաւական չարագուշակ է։ Թէ որքան սաստիկ է համաճարակը, այդ երեւում է նրանից որ Պետերբուրգի լրագրները լի են առողջապահական տեղեկութիւններով և մայրաքաղաքի լրագրների ժամանակական բաժնի

ՖԵԼԻԵՏՕՆ

ԼՈՒՍՄԱ *)

(ԵՐԱԶ)

(Անմահ Խաչատուր Աբովեանի յիշատակին)

«Ձեզ եմ ասում՝ ձեզ՝ Հայոց նորահաս երիտասարդք՝ ձեր անուշին մեռնեմ, ձեր արեւին ղուրբան, տասը լեզու սովորեցէք, ձեր լեզուն, ձեր հաւատը պահիմ բռնեցէք»։
Խ. Աբովեան

«Տեղը եկաւ՝ հայ է նա, տեղը եկաւ ապագրի,
Իրօք ոչ այս և ոչ այն է, այլ ծնունդ մի նոր «պղլի»։
Ռ. Պատկանեան

—Հիմա էլ՞ կասես, խօսքը առաջ տանելով Գնացականեանը, (դէ շուտ աչքս կոխիր, էլ ինչ ես կանգնել)՝ թէ «ազնիւ զէնքով պիտի կռուել...»։ Այստեղ լաւ կուշտ ծիծաղելու տեղն է, ափսոս որ իմ ծիծաղը չի գալիս, թէչ էլ վախենում եմ, որ քեզ չբարկացնեմ. «Ազնիւ—զէնք»։ լաւ բառեր են... Ինչ մեզ թաքցնեմ, այդ բառերը մենք էլ ենք գործ ածում և աւելի բարձր, աւելի յաճախ, բերանի աւելի առատ փրփուրով, քան թէ դուք. մենք չիրանի շատ անգամ ենք գոռում՝ «Էյ դուք, «հրէշներ, զզուելի, ստոր արարածներ, զարշելի սրիկաներ» (և ուրիշ՝ «զէնքի» տեղ գործ դրուող բառեր), մենք ձեր դէմ «ազնիւ», հասկանում էք, «ազնիւ» զէնքերով ենք կռուած, իսկ դուք «անազնիւ», ժանգոտած, կեղտոտ թրերով և այլն։ Դէ հիմա հօ մենք—մենք ենք. մէկ էլ շարենք այդ բառերը միմեանց կողքի, որ քէֆներս գայ, տեսնելով՝ թէ որքան են նոքա համապատասխանում, դեղապատշաճ գալիս միմեանց. մի կողմը «հրէշ, սրիկա», միւս կողմը «ազնիւ» այն էլ «զէնք»։ Կամ ինչու այդ բառ՝ շատ՝ բառեր (որոնց խառնակութեան շտեմարանը կարելի է համարել մեր էլ, ձեր էլ թերթերը), մեր առնենք հենց ամենից աւելի կրկնուող և բնական համարուող, երկու հատիկ կլօրիկ, կարճիկ, փայլուն բառերը, որոնք մասամբ ու ակի պէս փոքրիկ բայց սարսափելի թանգ բաներ են. և ահա նորից՝ «ազնիւ»—զէնք»...Թող տուր այժմ բացատրութեան, գլուխ ցաւեցնելու փոխանակ մի քանի այդպիսի ջուխտակ ջուխտակ բառեր էլ շարեմ. բաւական սակայն դարձեալ այդ անզին գոհարներից. «ազնիւ զէնք», «անազնիւ դարման», «առաքինի գող», «խաւար արեգակ», «սպիտակ շտաւոտ անբարոյական», «զզուելի հրեշտակ», «սուրբ սատանայ», «հնապաշտ «Նոր Դար» և այլն և այլն. Իսկ իմ կարծիքով ամենամեծ, ուղղակի անսատուած անազնուութիւնը հենց նոյն իսկ այնպիսի բառեր շարադրել ու գործ ածելն է, որպիսին է «ազնիւ զէնքը», որովհետև զէնքը միայն մի դէպքում կարող է «ազնիւ» լինել», երբ որ նա բամբակով ու փալասներով է փաթաթուած։ «Ոչ, կաղապակէք, հներն իրանց նետերի ծայրերը թէյում էին, այժմ էլ վայրենիները նոյն են անում, իսկ մեր մէջ այդ ոճիրը մահով է պատժուում։ Այո, բայց և միևնոյն ժամանակ անհուն գանձով և մեծագոյն փառքով է վարձատրուում ամենայն մի «հանճարեղ գիւտ», որ միջոց է տալիս որքան կարելի է աւելի թուով մարդիկ կոտորել կամ կէս մարդ դարձնել. գալով ազնուութեան և վեհանձնութեան կանոններին պատերազմի ժամանակ՝ Սալամինեան կռուում հազիւ թէ այն անարդարութեանց ու տմարդութեանց հարիւրերորդ մասը կատարուած լինէր, ինչ որ կատարուեց Ֆրանս.-Պրուսական պատերազմում. փոփոխուած միջոցները միայն հաշակի խնդիր են։ Սակայն աւելորդ է այդ մասին շատ էլ երկարացնելը. արդարութիւն որոնել կռուի մէջ, որ իւր էութեամբ անարդար թագաւորութիւնն է՝ կը նշանակէ էլի հագնել այն միամտութեան գլխակոցը, որին խիստ լաւ են գալիս «ազնիւ զէնքերը»։ Ո՞վ չգիտէ՝ որ այն մինչև երկինք բողոքող անարդարութիւնը, որ «յաղթողի իրաւունք» է կոչուում, մարդու զուտ անասնական ձգտումներից մէկն է, որոնց մի մի որոշական անուն տալով, մարդիկ ոչ միայն չեն ամաչում, այլև պարծանքով են աշխատում իրագործել։ Ի զուր չի ասել Գեօթէի Մեֆիստոֆիլը՝ «ուր որ չկայ միտք, այնտեղ մարդիկ ստեղծում են մի որ և իցէ բառ»։ Նոյնը այն է, որ ես էլ, իմ համախոհներն էլ չենք հաւատում, հրաժարուելով հրաժարուում ենք «սրբազան կռուից» էլ, նորա «ազնիւ զէնքից» էլ, դաւանում ենք (բայց չենք խոստովանում), որ ամենայն մի կռիւ բռնութիւն է և ամեն մի զէնք՝ սպանիչ և վիրաւորիչ և ուրեմն անխիղճ, անազնիւ։ Հիմա էլ չասես՝ «բա էլ ինչու էք կռուում»։ Ես առանց այդ էլ փոքր ինչ հեռացայ իմ նիւթից, աւելի չեմ հեռանալ դատարկաբանելու այն հարցի մասին, որի վերաբերութեամբ ամբողջ մատենադարան գրքեր են գրուած ու կը գրուին էլ պատերազմներից աւելի թուով, որոնց մէջ կան այնպիսիներ՝ որոնք ասում են՝ «պատերազմները նորա համար են մղուում, որ էլ երբէք մարդիկ չկռուին»։ այդ էլ նման է մեր դարու «զինուորեալ խաղաղութեան» մեծ գաղափարին...Էլի «ազնիւ զէնք»։ Օֆ՛ֆ՛ֆ, դարձեալ այսօր իմ գլուխը ցաւելու է...Այս անպիտաններն էլ՝ ինչ որ բերելու էին, չբերեցին՝ մի որկորներս թրջէինք, ասաց թթուելով Գնացականեանն ու հանեց կալցրեց իւր ծխափարչը, տուփը դնելով ընկերոջ առաջին ու հարց տալով ծխի հետ. Թէ դեռ էլի չես ծխում...

—Չէ, Տօ, այդ ինչ պաշտէսաթող էր, որ սկսեցիր, Գնացականեան. քեզ ծով էր ասում՝ գնա սար ու ձոր ընկիր, գլուխդ քարէ քար տուր, որ ցաւի. լաւ, հիմա ով չգիտէ՝ որ մեր մէջ եթէ կայ էլ գաղափարի կռիւ է, որի միակ զէնքը՝ խօսքն ու համապատասխան գործն, օրինակն են, որոնց մէջ ազնիւն էլ կարող է լինել, անազնիւն էլ՝ և այդ ապացուցանելու համար բնաւ այնքան էլ հեռուները գնալու հարկ չկայ. բաւական է հենց այսօրուայ մեր փորձունքները...

—Սպասիր, ի սէր Աստուծոյ, սպասիր, ասաց Գնացականեանը, ծուխը պնչերից քուլայ քուլայ բաց թողնելով ու ինքն էլ իւր վերայ փծծխմնղ տալով. մի փախենալ. ես որ մի բան սկսեցի, էլ պակաս տեղ չեմ թողնիլ, կասեմ բոլորը. այն էլ՝ քեզ։ Գաղափարի կռիւ է, այո, բայց որպիսի էլ ուզում է լինի՝ կռիւ է և ունի կռուի բոլոր յատկութիւնները, որոնցից մի քանիսը ես յիշեցրի քեզ։ Իսկ կռուողի վերաբերութեամբ շատ յարմար է գալիս ժողովրդական ասացուածը. «Արջը եօթանասուն երկու առած ունի, բոլորն էլ տանձի վերայ»։ Թող կռուողը եօթանասուն հազար կանոն ունենայ, բոլորն էլ յաղթութեան օգտին են և նորա այբն ու ֆէն այս է՝ «ինչ ուզում ես արա, միայն թէ յաղթիր, և փառք ու պատիւը քոնն է»։ Մի զարմանալ՝ եթէ ասեմ, որ գաղափարական, խօսքով և կենդանով մղուող կռուի մէջ էլ «անազնիւ» անուանուած «զէնքը» աւելի ևս ներելի է համարուում քան արիւնահեղ պատերազմում. ինչպէս վերջինում՝ լրտեսութիւնը, խաբեբայութիւնը, սով ու ծարաւը և այլն, և այլն, այնպէս էլ առաջինում՝ քսութիւնը, սուտը, անուանարկութիւնն ու քաղաքականապէս հակառակորդին վիրաւորելը, սպանելը մեծ վարպետութեամբ գործ են դրուում, և այն չափով ներելի են, որ չափով նպատակայարմար և յաջողակ են։ Թող է տրուում և մինչև անգամ հրահանգուում է՝ որքան կարելի է յաճախ և բարձր գոռալ՝ «ազնիւ զէնք, արդարութիւն, ճշմարտութիւն, հեռու նախանձն ու խարդախութիւնը» և այլն և այլն, բայց ոչ թէ իբրև իսկական նշանաբան, այլ իբրև մէկը և շատ զօրաւորը նոյն իսկ «անազնիւ զէնքերից» (որոնց գումարը մի զոյգ էլի շատ փայլելուչ բառերով «զինուորական խորամանկութիւն» է կոչուում), իբրև դիմակ։ Ո՞ր կռուողը կը խոստովանի՝ որ արդարը, ազնիւը իւր հակառակորդն է, ինքն է ապիրատն ու անիրաւը, այդ հօ անբնական էլ կը լինէր. նոյնքան անբնական կըլինէր՝ եթէ երկու մարդ կամ երկու բանակ, երկուսն էլ իրաւացի լինելով՝ ըսկսէին լուռ ու մունջ կամ աւելի ծիծաղելի՝ միայն զուտ ճշմարտութիւնը գոռալով միմեանց վեր հատել. ասել կուզի թէ՝ ուր որ կայ կռիւ, այնտեղ կայ և դըպրարտութիւն ու հայհոյանք, ինչպէս բոց եղած տեղը ծուխն էլ կայ ու կայ։ Գալով գիւղութիւններին՝ քաղաքական կռուում հազար անգամ աւելի հեշտ է ձեռքից զէնքն ուզածի պէս գործ ածել, քան աշխարհական ճակատամարտում. Ճիշտ այն խելքի գլխին, որ մարմնական ուժից էլ աւելի հնարագէտ չի լինիլ և մոխիր ցանեմ այն կոկորդի, լեզուի և գրչի վերայ, որոնք թնդանօթից, հրացանից ու սրից էլ չեն գերազանցիլ։ Տօ, զինուորականն էլ գողայ թշնամու առաջ և քթանի մտածելով՝ թէ ձեռքի ծանր սուրն ինչպէս շարժի որ իրան էլ պաշտպանի, թշնամու գլխին էլ մի օյին գայ (դէ արի այստեղ ազնուութեան մասին մտածիր) ես էլ առանձնասենեակումս՝ իբրև ամուր բերդում նստած, ալլիւմինիումէ թեթև գրիչն իբրև զէնք մատներիս մէջ խաղացնելիս, լաւ իմանալով՝ որ նորա ամեն մի ոստիւնը կամ ճկումը գլխաւթական ձևով թշնամուս տունը քանդում է, իսկ ես կախարդի պէս նստած հրճուում եմ, որ «այնտեղ» ամբողջը անգամ չի էլ իմանում, որ այդ տան քանդողը ես եմ. ամեն մի մատս այստեղ շարժելիս, այնտեղ մի քար վայր է ընկնում։ Ասում

*) Տես «Արձագանք» № 79.

մեծ մասը նուիրուած է նորանոր բացուող ձրի ճաշարաններին, եփած ջրի կայարաններին, նոր առողջապահական խմբերին, ևայլն ևայլն։

***

Գերբէնդի նաւահանգստի ուրուագիծն արդէն ներկայացրած է առևտրական նաւահանգստների շինութեանց յանձնաժողովին և այդ նաւահանգստի կառուցման համար պահանջուած ծախքը, «Տօրգովօ-Պրոմ.» լրագրի ասելով, ենթադրուած է մտցնել ճանապարհների հաղորդակցութեան նախարարութեան նախահաշուի մէջ առաջիկայ տարի։ Նաւահանգստի շինելով և երկաթուղու գիծ անցնելուց յետոյ Գերբէնդի շրջանը գործարանական գործունէութեան ահագին ասպարէզ կը ներկայացնի։ Գերբէնդից մինչև Կայակէնտ ամբողջ ճանապարհի վրայ շարունակ երևում են նաւթի աղբիւրներ։ Սամուրի շրջանում նորերս գտել են սնդիկի հանք, իսկ Րուբասու գետի ափում գտնուած է քարածուխի հանք։ Կասկած չկայ որ Ղայթաղ-Թաբասարանի շրջանում երևեցած ծծմբի, արճճի, արծաթի և երկաթի հանքերը նոյնպէս անմըշակ չեն մնալ։ Առայժմ յայտնի է որ Գերբէնդի շրջանում նաւթահորերի պեղմամբ պարապում է Բենկենդօրֆների նախկին կառավարիչ յայտնի Կազլիակովսկին, իսկ ծծմբահանքերի մշակութեամբ պարապում է Բագուեցի յայտնի հայազգի հարուստ Առաքել Դաւուրեանը։

***

«Արձագանքի» անցեալ համարներում հաղորդել էինք ելևմտից նախարարութեան մտադրութիւնը հարկի ենթարկել վարկային մասնաւոր հաստատութիւնները։ Այժմ մայրաքաղաքի լրագրները հաղորդում են որ այդ նպատակով կազմուած յանձնաժողովի նիստերը յետաձգուած են մինչև Օգոստոս ամիսը։ Այդ նիստերի մէջ պիտի քննուի մասնաւոր բանկերի, լոմբարդների, փոխադարձ վարկի ընկերութեանց, բանկային գրասենեակների և սառաֆների հարկի ենթարկելու խնդիրը։ Յանձնաժողովի նախագահն է իսկ. պետ. խոր. Կորսակով։

***

Մենք հաղորդել էինք ընթերցողներին, թէ Վլադիկավկազեան երկաթուղու վարչութիւնը ահագին պատրաստութիւններ է տեսնում նաւթահանքեր և պահեստներ շինել Գրօզնայի կերօսինի համար. այժմ լրագրները հաղորդում են, որ այդ պատրաստութեանց համար լինելիք ծախքերը որոշուած են մինչև 12,090,790 րուբլի։

***

Մայրաքաղաքի լրագրները հաղորդում են. Կովկասեան երկաթուղու գլխաւոր կառավարիչ Փրիդէն, որ այժմ գտնվում է Պետերբուրգ, աւելի բարձր պաշտօն է ստանում։

***

Պետական երկաթուղիների գլխաւոր վարչութիւնը թոյլ է տուել բոլոր երկաթուղիներին՝ [illegible] կոչուած տոմսակներ տալ 150 վերստ հեռաւորութեան վրայ՝ բոլոր ցանկացողներին։ Այդ տեսակ տոմսակներ կարելի է ստանալ, իւրաքանչիւր անգամ առանձին թոյլտուութիւն ստանալով, զանազան երկաթուղիների կառավարիչներից։

***

ՆՈՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ «ՎԼԱԴԻՄԻՐ» ՇՈԳԵՆԱՒԻ ԽՈՐՏԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Սոսկալի դժբաղդութեան առաջին ծանր տպաւորութիւնն անցնելուց յետոյ հասած տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ խորտակուած նաւի վրայ ճանապարհորդողների մեծ մասը խեղդուել են նոյն իսկ այդ նաւի նաւաստիների անխղճութեան պատճառով։

Նաւաստիների խումբը բացի նաւապետից վտանգի հէնց առաջին րոպէներում մտածել է միայն իր մասին և պաշտպանել միայն իր կեանքը։ Ճանապարհորդները թողնուել են բնութեան կամքին և ազատուել են ով ինչպէս կարողացել է։ «Վլադիմիր» նաւի վրայ նաւաստիների թիւը ճանապարհորդների $^1/_2$ մասից աւել էր, այնպէս որ եթէ մարդասիրական ամենափոքր զգացմունք լինէր այդ մարդկանց մէջ և ոչ մի ճանապարհորդ ջրահեղձ չէր լինիլ։

Իտալացիք սաստիկ վրդովուած են նրանց մասին տարածած լուրերից, երբ թէ իրանք ցանկացել են փախչել վտանգի տեղից։

«Միթէ խելքը գլխին մարդը, — ասում են նրանք, կարող է այդ տեսակ վայրենի մտածմունք ունենալ։ Ո՞ւր կարող էինք փախչել։ Միթէ Իտալիայում դատաստան և քննութիւն չկայ։ Միթէ այնտեղ չէին իմանալ, որ մեր նաւը ընդհարումն է ունեցել մի այլ նաւի հետ, միթէ չէին հաղցնիլ, թէ ինչից է վնասուել մեր նաւը։ Կամ, գուցէ, դուք կարծում էք, թէ իտալական արդարադատութիւնը սահմանիւն կը վերաբերուի այսպիսի դէպքերին։ Ո՛չ։ Իտալական օրէնքները խստիւ պատժում են ծովագնացներին՝ ծովային օրէնքներ խախտելու դէպքում»...

Իտալացիք անսահման վրդովուած են ռուս նաւաստիների դէմ և նրանց են մեղադրում։ «Ռուս նաւաստիները—ասում են նրանք, կարող էին ազատել ոչ միայն մարդկանց, այլ նոյն իսկ նաւը։ Կօլումբիայի կրած վնասներից դատելով «Վլադիմիրի» վրայից միայն երեք չորս կտոր երկաթ է վնասուել։ Նաւը քիչ բեռ ունէր և ծակուած տեղի մեծ մասը ջրից վերև էր։ Անհնարին էր որ միանգամից այնքան ջուր լցնուէր որ նաւն ազատելն անհնարին լինէր։ Մեր կարծիքով նաւապետը և նաւաստիները կարող էին ծակը ծածկել մատրացներով և նաւը պահպանել ընկղմելուց»։

«Վլադիմիր» նաւի նաւապետի օգնականը և 6 նաւաստիները հասել են թէ չէ «Կօլումբիայի», ցանկացել են նրա վրայ կարգադրութիւններ անել իրենց ցանկացածի պէս։ «Ով կը թողնէ, ասում են իտալացիք, որ ուրիշները կառավարեն իր նաւը. դրանից միայն վնաս առաջ կը գայ և ոչ օգուտ։»

«Կօլումբիայի» նաւապետը յայտնի է իբրև փորձուած և քաջ ծովագնաց, նա դեռ 1881 թուին անցել է Աւստրալիայում Torrek Streets և դրա համար պարգև է ստացել իր կառավարութիւնից։ Օդեսայի հասարակութեան մէջ, որոնք լսել են ազատուածների պատմութիւնները և ծանօթ են ծովագնացների վարք ու բարքին, նոյն կարծիքն է տիրում՝ որ միայն իտալական նաւն է իր պարտքը կատարել սրբութեամբ, միայն իտալական նաւն է մինչև վերջին րոպէն աշխատել ազատել թըշուառներին։ «Վլադիմիրի» վրայ, երբ հէնց դժբաղդութեան առաջին քայլում նաւաստիները փախան, ճանապարհորդներն իրենք էին իջեցնում նաւակները, փնտռում ազատարար գօտիները, ևայլն ևայլն։ Իսկ պէտք է ի նկատի ունենալ որ խորտակուած նաւը մի ժամ ու կէս մնացել է ջրի երեսին և եթէ նաւաստիները փախած չլինէին և կատարէին իրենց պարտքը և ոչ մի զոհ չէր լինիլ։

***

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ և ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ VIII ՄԻՋ. ԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ ԲՈՒԴԱ-ՊԵՇՏՈՒՄ

Պ. Խմբագիր.

Յանուն կը պարտաւորեցնէք տպելով Ձեր յարգելի լրագրի մերձակայ համարներից մէկում հետևեալ տողերը.

Առողջապահական և ժողովրդագրական VIII-րդ միջազգային համաժողովի նախապատրաստական աշխատութիւնները վերջանալու վրայ են։ Այս աշխատութիւնների արդիւնքը մեծ է և արդէն իսկ գերազանցում է մեր տածած յոյսերն. Համաժողովը ոչ միայն արժանաւոր յաջորդ է հանդիսանում իրենից առաջ եղածների, այլ և շատ տեռակէտներով, նրա աջողութիւնն աւելի և՛ս նշանաւոր կը լինի՝—մենք լիայոյս ենք այս մասին, աչքի առաջ ունենալով այն հետաքրքրութիւնը, որ նա զարթեցրել է աշխարհիս բոլոր երկրներում։ Մինչև այս օրերս ստացուել են 593 դասախօսութիւն առողջապահական բաժնի և 132 ժողովրդական բաժնի համար, ընդամենը 725 դասախօսութիւն։ Բացի սրանից՝ ժողովին կը մասնակցեն 26 կառավարութիւն 92 պատգամաւորութիւնով, 91 իշխանութիւն 163 պատգամաւորներով, 41 համալսարաններ 65 պատգամաւորներով և վերջապէս 132 ընկերութիւն ու միութիւն 300 պատգամաւորներով, այսպէս մինչև այսօր—290 պատգամաւորութիւն 620 անդամներով։

Այս պատգամաւորութիւնների թըւում մեր պարտքն ենք համարում յատկապէս յիշելու հետևեալ պետութիւնները՝ Արգենտինեան հասարակութիւն, Ամերիկայի Միացեալ-Նահանգներ, Ճապոնիա, Միչիգան, Ալէքսանդրիա, Բուրմա, Հովրաս, Ռանգօն և Մեքսիկօ քաղաքները, Նիւ-Եօրքի «Columbia College»-ը, Միչիգանի համալսարանը և այլն։

Համաժողովի ամենանշանաւոր և հետաքրքիր մասերից մէկը կը լինի ցուցահանդէսը և մանաւանդ սրա այն բաժինը, ուր կարելի է տեսնել մեծամեծ քաղաքների առողջապահութեան համար գործ դրուած միջոցների կատարելագործութիւնները։ Այս վերին աստիճանի հետաքրքիր բաժնին մասնակցողների թըւում, կը յիշենք հետևեալ քաղաքները՝ Փարիզ, Բերլին, Համբուրգ, Վենետիկ, Օդեսա, Բրիւն, Մոնպելիէ, Ալէքսանդրիա և այլն։

Ընդհանուր հետաքրքրութիւն ներկայացնող դասախօսութիւնների թւում կը յիշենք հետևեալները.

1. Պրոֆ. Ի. Լըվասեօր (Փարիզ). պատմութիւն ժողովրդագրութեան։
2. Էրնէստ Հարտ (Լօնդօն). Միջոց խոլերայի դէմ արևելեան երկրներում և կարծիք նրա համաճարակի յառկութեան մասին. խոլերայի տարածուիլը գետային և երկաթուղու մեծամեծ գծերի հաղորդակցութիւնների համեմատ, այն անմիջական յարաբերութիւնները, որ գոյութիւն ունին խոլերայի և հարնքանման ջերմի համաճարակների մէջ, ջրի կաթի և սննդարար նիւթերի միջոցով և այլն։
3. Պրոֆ. Կ. Լոմբրոզօ (Տուրին). յանցաւորը։
4. Պրոֆ. Էրիսման (Մոսկուա). Մրցումն մահու դէմ (գերմաներէն)։
5. Պրոֆ. Լէյդէն (Բերլին). Այն միջոցների մասին, որոնք գործ են դնում մեծ քաղաքները թոքախտաւորների համար (գերմաներէն)։
6. Պրոֆ. Գ. Ֆոն-Մայէր (Ստրասբուրգ). Վիճակագրութիւն և սոցիալոգիա (գերմաներէն)։
7. Ինժեներ Հեր բերգ (Բերլին). Ինժեներների պայտաւորութիւնները առողջապահութեան վերաբերեալ (գերմաներէն)։

Եւրոպական նեղքարանալ-շոգեկառքերի և արտակարգ գնացքների միջազգային ընկերութիւնը պարտաւորուել է գեղջելու ճանապարհորդների տոմսակները։ Այս գեղջերը միայն այն անձանց համար կըկատարուին, որոնք կունենան ժողովին անդամակցելու տոմսակը։ Կարգադրիչ մասնաժողովը ուղարկում է այս բոպէիս հրաւիրաթղթեր երկրորդ տըպագրութեամբ, որոնց մէջ բացատրուած են մանրամասնօրէն բոլոր հարկաւոր տեղեկութիւնները և հրաւիրում են գիտնական ժողովի անդամներն ուղարկելու մինչև օգոստոսի 10-ը իրենց իրաւունքի գեղջերի հաշուեցուցակը՝ համաժողովի ընդհանուր քարտուղարին (Բուդա-Պեշտ, հիւանդանոց Սէն-Ռօշ—Buda-Pest, hopital St Roch), որովհետև այլապէս կարգադրիչ մասնաժողովը չի կարող պատասխանատու լինել այն առաւելութիւններին, որոնցից զրկւում են ուշացող անդամները։

Ընդունեցէք և այլն
Ընդհանուր քարտուղար՝
Պրօֆ. դօկ. Կ. Միւլլէր

Բուդա Պեշտ, 10 յուլիսի

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

*** «Սարատովսկիյ Լիստոկ» լրագիրը յայտնի ռուս դերասան Անդրէյ Բուրլակի կեանքից հաղորդում է մի հետաքրքրական պատմութիւն, որ իբր թէ տեղի է ունեցել Թիֆլիզում։

«Մի անգամ Թիֆլիզում — ասում է «Սար. Լիստ.», Վ. Ն. Բուրլակը ներկայացումը վերջանալուց յետոյ գալիս է տեղական կլուբն ընթրելու։

Ինչպէս միշտ սովորաբար, այս անգամ էլ հոծ բազմութիւն իսկոյն շրջապատում է Անդրէյ Բուրլակին և ամեն մի մի կողմից հրաւիրում էին նրան ընթրելու։ Ընթրիքից յետոյ շրջապատողների թիւն աւելացաւ և շատերն սկսեցին խնդրել արտիստին, որ մի որ և է բան պատմի։

— Պարոններ, ես ձրի չեմ պատմիլ, յայտնեց Վ. Ն., ով ցանկանում է թող մի րուբլի վճարէ իւրաքանչիւր պատմածիս համար. համաձայն էք։

— Համաձայն ենք, գոչեցին ամենքը և Բուրլակն սկսեց։ Մի պատմութիւն պատմեց, խնդրեցին պատմեց և երկրորդը, երրորդը, չորրորդը վերջապէս տասներորդը և տեսնելով որ լսողների հետաքրքրութեան վերջ չկայ, լռեց և սկսեց փող ժողովել։ Ժողովուեց մի քանի հարիւր րուբլի։ Կլուբի անդամները թէև վճարում էին ուրախութեամբ, բայց միևնոյն ժամանակ զարմացած նայում էին միմեանց երեսին. կարծէք թէ ասել լինէին. «ինչպէս, այսպիսի երևելի արտիստը թոյլ է տալիս իրեն քաղաքավարի կողոպուտ»։ Բայց պ. Բուրլակը յանկարծ անսպասելի կերպով խնդրեց օրապահ-աւագից մի գիրք և սկսեց գրքի մէջ կարգով գրել փող տուողների անունները հետևեալ վերնագրի տակ «Նուիրատուութիւններ յօգուտ գաղթական սովամահ տաճկաստանցի հայերի»։ Երբ բոլոր գումարների ցուցակը և նուիրատուների ազգանունները գրեց, ամենից վերջն էլ աւելացրաւ.—Անդրէյ-Բուրլակ նուիրում է 25 րուբլի. դրանից յետոյ հանեց գրպանից 25 րուբլի և ժողովուած բոլոր գումարի հետ միասին յանձնեց օրապահ-աւագին։

Չգիտենք որքան ճիշտ է «Սարատ. Լիստ.» պատմութիւնը, սակայն կարելի է ասել.

Si non vero, bene trovato!

ԹԵՐԹՕՆ

ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ 12 ՆՈՐԸՆՏԻՐ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՆԵՐԸ

(Կենսագրական և այլ տեղեկութիւններ)

I

ԲԺԻՇԿ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԼՕՐԻՍ-ՄԵԼԻՔՈՎ

Հեռու ազգական հռչակաւոր կոմս Միքայէլ Լօռիս-Մելիքեանի,

եմ՝ այդպիսի զէնք ունենամ. ձեռքիս ու երբ որ պէտք է, այն էլ կռուի մէջ, գործ չածեմ. խելքս հօ հացի հետ չեմ կերել...

— Այո, դրուստ ես ասում այդ բոլորը, թէ՞ կատակ ես անում...

— Կատակն որն է, տօ, ես քեզ բա՛ն եմ ասում...

— Գնացականեան, թո՛ղ քո երեսին...

— Կատակ ես անում թէ՞ ուղիղ ես ասում...

— Եթէ քոնը կատակ չի, իմը հօ կատակ չի ու չի...

— Ի զուր, որովհետև իմ վերջին խօսքերը սերտ կապով շարունակութիւն ու կատարումն են իմ այն խօսքերի, որոնց համար դու ուզում էիր շրթունքներս համբուրել։ Որքան ասածներս ուղիղ են, այնքան էլ ուղիղ է և այն՝ որ ոչ ոքի չեմ ասել քեզ խոստովանածներս։ Կամեցայ հազարից մի անգամ չիրաւի անկեղծ ու ազնիւ լինել գոնեա միակ ընկերոջս մօտ, չծածկել նորանից ճըշմարտութիւնը, բանալ նորան սրտիս դեռ անպիղծ մնացած խորշերից մէկը, և ահա իմ վարձատրութիւնը, թո՛ւք։ Ուրիշ բան է՝ եթէ ես այժմ էլ «գաղափար», «նուիրական գործեր», «անձնուիրութիւն» և այլն դոռալ. Բայց ոչինչ. այդ ինձ չի յուսահատեցնում. ես դեռ չեմ վերջացրել. շարունակում եմ իմ «բացատրութիւնը» ամենայն անկեղծութեամբ (չէ՞ որ ասում էիր՝ թէ դորա համար ես եկել). երբ կը վերջացնեմ, տեսնենք այն ժամանակ ի՞նչ կասես։ Ասացի՝ մեր մէջ կռիւ է և մենք երկու հակառակ բանակների զինուորներ ենք. ինձ արդարացնելու համար ես յիշեցրի քեզ՝ պատերազմներին առհասարակ ներելի համարուած մի քանի մեղքերը, այժմ էլ քո լուրջ ուշադրութիւնն իմ հրաւիրում մասնաւորապէս զինուորին ոչ միայն ներելի, այլ և պարտաւորական մեղքերի վերայ, որոնք «մեղքեր» էլ չեն կոչւում, այլ՝ ինչպէս և ուրիշ «ազնիւ» անուններով վերամբ կրուած չարիքները, կոչւում են «սուրբ պարտք», «առաքինութիւն» կամ մի այլ լաւ «ութիւն»։ Այդ «սուրբ պարտք», այդ «առաքինութիւնը», որ եթէ չկատարես, քեզ հրացանի բերան կը տան՝ իբրև ամենամեծ չարագործի, այս է՝ «կատարիր, ինչ որ քեզ հրամայում են», ասում են՝ պղծիր՝ պղծիր, ասում են՝ քանդիր՝ քանդիր՝ թէկուզ լինի եկեղեցի. ասում են՝ խաբիր՝ խաբիր, ասում են՝ խոցիր՝ խոցիր, ասում են՝ սպանիր՝ սպանիր՝ թէկուզ լինի հարազատ հօրդ»։ Ուրիշ ազգերի պատմութիւնն ու օրէնսդրութիւնը, որ այս մասում մի են, մի կողմը թողնենք. մեր «փառաւոր» անցեալի ամենափայլուն միջոցի՝ Վարդանանց պատերազմի ժամանակուայ, որով մենք այնքան պարծենում ենք, օրէնքներն ու նոցա մասին Եղիշէի վկայութիւնը հօ ընդունում ես, համեցէք. «...Ձեռն եղբօր հարազատի ի մերձաւոր իւր լիցի, որ անցեալ լիցէ ըստ ուխտ պատուիրանին Աստուծոյ և մի խնայեսցէ հայր յորդի և մի ակն առնուցու որդի հօր պատուոյն։ Կին կռուեսցի ընդ առն ամուսնոյ, և ծառայ դարձցի ընդդէմ տեառն իւրոյ։ Օրէնք աստուածային կացցեն թագաւոր ի վերայ ամենայնի, և ի նմին օրինաց ընկալցին յանցաւորք զպատիժս դատապարտութեան»։ Ներիր ինձ, որ կրկնութեանց մէջ եմ ընկնում (Սամելի ձեռքով այդ օրէնքի գործադրութիւնը իւր հօր՝ Վահանի գլխին արդէն յիշեցի), բայց ինձ քաղցր է վըկայութիւն բերել քեզ այն գրքից, որ դու գրեթէ ամբողջապէս անգիր ես արել ու իմ գլուխս էլ նորա հատուածներով լցրել, որ չասես էլի՝ թէ օտարամոլ եմ, ազգային պատմութիւնը թողած ուրիշ ազգերից եմ օրինակ բերում։ Այդ օրէնքը շատ յարմար է իբրև օրինակ բերուելու նաև նորանով՝ որ միայն զինուորների ու պատերազմի համար չէ եղել դրուած իբրև կանոն. ի՞նչ զինուորութիւն, երբ որ կանայք ու ծառաներն էլ պիտի կռուեն ամեն մի տան քունջ ու պուճախում. խօսքն այստեղ նաև քաղաքական, գաղափարական կռուի մասին է։ Աւելի և յարմար է այդ օրինակը մէկ էլ նորանով, որ նոյն իսկ միևնոյն ազգութեան պատկանող երկու հակառակ բանակների մասին է խօսքը՝ Վասակեան բանակի և Վարդանեան միաբանութեան։ Դու գիտես, որ առաջ էլ ես Վասակի մասին տարածուած վատ կարծիքը չունէի, մասամբ դու էլ տատանում էիր. անգամ, յիշո՞ւմ ես, մենք մտադիր էինք՝ ես՝ մի պատմական հետազօտութիւն գրել, իսկ դու՝ մի վէպ կամ ողբերգութիւն, որում պիտի ճգնէինք ցոյց տալ, թէ Վասակը բնաւ դաւաճան չէր, այլ իւր ժամանակի ամենախելօք բայց չհասկացուած ազգասէր մարդը. այդ ժամանակից իմ կարծիքը Վասակի և իւր բանակի մասին աւելի առաջ է գնացել (իսկ քոնը, երևի, էլի մազանդի աշակերտի պէս՝ յետ) և ես, գուցէ կը գրեմ էլ իմ հետազօտութիւնը։ Առ այժմ համարիր մեզ մի նոր Վասակեան բանակ (ձեզ ենք թողնում Վարդանեան լինելու մխիթարութիւնը), որ իւր նախագծած նպատակներին հասնելու համար ոչ մի արգելքի առաջ չի կանգ առնիլ, որ, եթէ հարկ լինի՝ ոչ թէ մի անգամ, այլ թէկուզ տասն անգամ կը թուրքանայ և էլի ետ կը հայանայ։ Եթէ ձեզ ձեր կանոնադրութիւնը թոյլ չի տալիս մի անգամից աւելի նենգել (չէ՞ որ ինքը Վարդանն էլ մի անգամ ուրացաւ, պաշտեց, Վահանն էլ «երթեալ ի դուռն տկարանայր ի հաւատս»), մի էլ նենգէք, պառաւ աղջկայ պէս թանգ ծախէք ձեր առաքինութիւնը և կարծեցէք թէ ապագան ձերն է, իսկ մեր ոչ կանոնն է այնքան քարացած, ոչ ինքներս ենք այնքան միամիտ. մենք եօթանասնեկին անգամ եօթն հետ ներելի ենք համարում մեզ մեղանչել զանազան մանր մունր կանոնների դէմ, որոնք ոչ միայն չեն օգնում, այլ և խանգարում են նպատակի հասնել. նոյն իսկ մեր միակ կանոնը՝ կանոն չունենալն է, պայմաններով չկաշկանդուիլը, այլ սպառ, ճկուն լինելը, ժամանակի, հանգամանքների հետ յարմարուիլը և ամեն մի առիթից օգուտ քաղելը (Ծննդեան տօնին շարժական կամուրջը քանդուեց՝ մեղադրիր հոգևորականներին, Ղալաթէն այրուեց՝ սևացրու նահապետական ձևով տներ շինելու վերայ, այժմ կը հաւատան. գէ անձ, դու փողով ես եկել, ես դատարկ խօսքով... մի բան քանդուած է, տակն ու վերայ է եղած, թէկուզ հէնց Ճամախին երկրաշարժից, ուրախ ուրախ վազիր այնտեղ, գլխաւոր գործն ինքն իրան կատարուած է՝ քանդուել է, նորը շինելիս խորհուրդներ տուր և քո ազդեցութիւնը զօրացրու, կապիր անունդ նորի հետ ևայլն, ևայլն. տեսնում ես՝ այն, ինչ որ դու պէտք է ասես, ինքս չեմ թաքցնում, կեղծ չեմ). առանց այդ միջոցներին մենք անկարելի էլ ենք համարում մեր նպատակներին հասնել։ Այսօր սով ու գաղթ է Հայաստանում. դուք հօ ձեր գլուխը քարէքար տուէք, լացէք, անիծեցէք տաճկաց կառավարութիւնն ու քրդերին. քանդուած տաճարներն ու պապերի գերեզմանները յիշեցրէք ժողովրդին՝ որ չգաղթէ, տեսնենք ով ձեր խօսքերին ու լացին մի կոպէկ գին կը տայ կամ ինչ մի շօշափելի օգուտ կը բերէք, չէ՞ որ նոյն իսկ գաղթող խելակորոյս պառաւն էլ իւր տունը, տեղը թողնելիս և բոլոր ճանապարհի երկարութեամբ միևնոյն բանն է գոռում ու լալիս, ինչ որ դուք, սակայն այդ նորան չի խանգարում գաղթել. . . իսկ մենք՝ բոլորովին ուրիշ եղանակ կածենք. մենք կը յարձակուինք նոյն իսկ ձեզ վերայ և մասամբ իրան՝ ժողովրդի վերայ, ցոյց կը տանք՝ որ դուք էք մեղաւոր՝ որ սով է, ձեր բռնած ու պաշտած նահապետական ողորմելի ձևը երկրագործութեան ու գիւղատնտեսութեան մէջ, ձեր Նոյեան գութանը իւր սարօք, ձեր՝ շտեմարաններ, հասարակաց փոխատու և փոխատու կենդրոնական ամբարներ չունենալը ևայլն ևայլն, իսկ յետոյ քաղաքատնտեսական և վիճակագրական գիտութիւններով զինուած կը գանք ապացուցանելու՝ որ եթէ հաց չկայ ուտելու՝ աւերակ վանքերն ու պապերի գերեզմանները չեն կարող պահել կենդանի մարդուն իւր թշուառ հողում, ուր վերջին ունեցածն էլ ձեռիցը խլում են և այլն և այլն ու կաւելացնենք՝ «այդ բոլորը մենք քսան տարի առաջ ենք ասել. հիմա տեսա՞ք, հաւատացի՞ք. այդպէս ամեն մեր ասածները կատարուել են և կը կատարուին» ևայլն ևայլն. այնուհետև դու տես մարգարէի ու ժողովրդական իսկական բարեկամի կոչումն ու պատիւը, երախտագիտական վարձատրութիւնը մենք էնք ժառանգում, թէ դու՞ք... Սպասիր, դեռ ես չեմ վերջացրել. Վեր առնենք էլի այսօրուան դէպքը. ինքդ ես ասում՝ որ եթէ ես ամենից առաջ «ձեր», Նոքա», «նոցա» գոռալով քո էլ վարկը «նոցանի» հետ վայր չ'ձգէի, յաջողութիւն չէի ունենալ։ Եւ չիրաւի եթէ Աստուած խելքս առնէր, կանգնէի ասէի. «Թէև սորա այստեղ ուղարկողները հալալ պտուղներ չեն, սատանայի ոտի ոտն են, կեղծաւոր են, փարիսեցի են, բայց սա ինքը հալալ կաթնակեր է, ես սորան լաւ եմ ճանաչում, սա հրեշտակ է ի մարմնի, հասարակաց օգտի համար գլուխը յետ է դրել ևայլն ևայլն» ու հետոն էլ կցէի՝ «բայց մի՛ հաւատաք դորան, ձեզ վնաս կը բերի ևայլն», ժողովուրդն ինձ ոչ միայն չէր հաւատալ, այլ հօ խելագարի տեղ էլ կըդնէր և ես կը լինէի «իբրև գծնծղայ», որ միայն ծիծաղեցնելու համար է «ղօղանջում»։ Որ այդ չպատահէր՝ ինչ էր մնում անել, եթէ ոչ այն՝ ինչ որ գոնէ ամենից գիւրագոյնն էր և արուեցաւ էլ . . .

(Կը շարունակուի)

մանկից յետոյ մերձ ազգականների համար սահմանուած սգոյ ժամանակամիջոցը օրինակելի ճշգրտութեամբ պահպանեց Փարիզում: Մի ամբողջ տարի իր գլխարկի վրայ սև քող էր կրում, նորա այցետոմսերը սև շրջանակով էին զարդարուած և ամէն պատեհ և անպատեհ դէպքերին աչքերը դէպի երկինք բարձրացնելով իր նախադասութիւնները համեմում էր «mon defunt oncle le comte Loris» բառերով: Պարոնը բժիշկ է: Այն դօկտորական թէզը (դիսերտացիան) որ Կարսի յաղթողի մերձ ազգականը ներկայացրեց Փարիզի՝ ֆակուլտէտին ռուս-ֆրանսիական սիրոյ արտայայտութեան թունդ ժամանակը, կրում էր հետևեալ վերնագիրը «Ռուսաստանի մայրաքաղաքի նորագոյն հիւանդանոցների արտաքին կազմակերպութիւնը»: Ֆրանսիացիք հիացած և գոհ էին մնացել (գոհացել ձևացել), որ իրենց բարբարոս դաշնակիցներն այդպիսի կատարելագործուած հաստատութիւններ ունին, ռուսները խիստ ուրախ էին որ առիթ ունեցան փայլել իրենց հիւանդային հաստատութիւններով և ահա ռուս-ֆրանսիական բարեկամական զգացմունքները խորամանկ հային գիտնական հռչակ ձեռք բերելու պատուանդան կազմեցին:

Մեր պ. բժշկապետը Թիֆլիզում սկսեց ժողովրդականութիւն վայելել Գրիգոր Արծրունու վերջին հիւանդութեան ժամանակ. բժշկում էր, ինչպէս մեր շատ վաղամեռիկ հայ գործիչներին, ինքը դօգտօր Գասպարեանը, իսկ բժ. Լօրիս-Մելիքովը խնամում էր հիւանդին, չէր հեռանում նորա անկողնից. յուղարկաւորութեան միջոցին բժիշկը սգալից դէմքով, սև ձեռնոցներով, ճիշդ ինչպէս defunt oncle-ի մեռած ժամանակ, թև տուած առաջնորդում էր այրին:

Բժիշկը երիտասարդ է, շատ շատ 37 տարեկան. նա ամուրի է և այս պատճառով իր մասնագիտութիւնը օրիորդաց հիւանդութիւններն են և նոցա ջղային տկարութիւնները, որոնք այնքան տարածուած են մեր հայոց դասակարգի մէջ: Բացի այս մասնագիտութիւնը, որ անշուշտ կը հասցնէ պ. բժշկին դէպի պատհով նաւահանգիստը, նա ի պաշտօնէ քաղաքային հիւանդանոցում պրօզեկտոր է:

Իր քաղաքական և սօսիալական համոզմունքներով պ. Լօրիս-Մելիքովը պատկանում է ծայրայեղ յառաջադիմական կուսակցութեան. այս աշխարհահայեցողութեան նորագոյն ապացոյցն այն է, որ այն 40,000 կոպէկից, որ նա նուիրեց ի յիշատակ իր նորոգ հանգուցեալ հօր, 10,000 կոպէկը յատկացրեց վրացոց մէջ գրագիտութիւն տարածելու ընկերութեան: Քաղաքացիական պարտաճանաչութեան զգացմունքը վերին աստիճանի զարգացած է նորա մէջ և հասնում է անձնուրացութեան աստիճանին. այսպէս 11-ին վախճանուեցաւ բժշկի մայրը, թաղումը տեղի ունեցաւ 13-ին, իսկ երեքշաբթի, ամսոյս 12-ին, երեկոյեան 7 ժամից մինչև $12^1/_2$ պ. Լօրիս-Մելիքովը մասնակցեց հոգաբարձական ընտրութեանց «ժէֆ»-ին անելով (tout comme chez nous à Paris) և հոգաբարձու ընտրելով: Արդ՝ ինչը, այո՛ ինչը, եթէ ոչ քաղաքացիական պարտաճանաչութիւնը կարող էր թելադրել փարիզեցի բժշկին, որ մի ամբողջ տարի սուգ պահեց Փարիզում իր հռչակաւոր oncle-ի համար՝ գլխարկին սև քող կրելով և այցետոմսերը սև շրջանակով զարդարելով,—թողնել իր հարազատ մօր անշնչացած դիակը սեղանի վրայ և անձնատուր լինել ընտրողական պայքարին...

Չէ, թշուառ չէ Հայաստան,
Եթէ որդիք այսպէս ունի:

A propos! Հայաստանի այս չքնաշխարհիկ որդին, հայոց գործերի այս հոգաբարձուն, հայոց հրապարակչական ընկերութեան այս ղեկավարը հայերէն չգիտէ: Բայց 19 դարու վերջին պահանջել, որ հայ գործիչը հայերէն իմանայ, արդարև մի նախապաշարմունք է, և միթէ ինքը մեծ բանաստեղծը չի ասել.

Ո՞վ է հայը. միթէ նա՛ է, որ խօսում է
հայ լեզուով.
Կամ թէ որի մականունը յանգում է «եան»
մասնիկով.

Առանց մարգարէ լինելու կարելի է նախագուշակել, որ իբրև հոգաբարձու պ. Լօրիս-Մելիքովը.

1) Հոգաբարձական նիստերը կանոնաւոր կերպով չի յաճախելի, որպէս զի չկարծեն որ իբրև բժիշկ քիչ հիւանդներ և շատ ազատ ժամանակ ունի:

2) Թէև ինքը ոչ աշխարհաբար և ոչ գրաբար գիտէ, բայց իբրև լուսամիտ յառաջադէմ, կըպահանջի, որ նիստերի արձանագրութիւնները փոխանակ գրաբար գրուելու աշխարհաբար գրուին, մանաւանդ որ բժշկականութեան մէջ էլ լատիներէնը այժմ այն դերը չէ խաղում, ինչ որ Մոլիէրի ժամանակ:

3) Թէև ինքը միակ բժիշկն է ամբողջ հոգաբարձութեան մէջ, բայց չի միջամտել դպրանոցի բժիշկ պ. Ալթունջեանի գործունէութեան, քանի որ սա կոմս Լօռու-Մելիքեանի հարազատ քեռորդին է. նա կը շատանայ կրօնական-մանկավարժական խնդիրները բնական գիտութիւնների տեսակէտից քննելու:

4) Եթէ նոր դպրոց կառուցանուելու լինի, ինքը իբրև մասնագէտ յանձն կառնէ շինութեան մէջ փչող քամիների խնամքը—այն է վենտիլացիան. նորա անձնուրացութիւնն այս դէմքում այն աստիճանի կարող է հասնել, որ ինքը պատրաստ կը լինի քամու ուղղութիւնը ցոյց տալու համար Փլիւգիրի դեր կատարել:

Հռչակաւոր զօրավար կոմս Լօռու-Մելիքեանի մասին ռուս զինուորները երգում էին.

Одинъ Сунджа, одинъ Терекъ,
Одинъ Лорисъ, одинъ Меликъ.

Իսկ բնագէտ և գործնական բժիշկ Լօրիս-Մելիքովի մասին ժամանակով կ'երգեն.

Одинъ Խօնջա, одинъ Կերէք,
Одинъ Լօռիս одинъ Մելիք:

Մ---

Ց. Գ. Հետևեալ թերթօնը նուիրուած կը լինի նորընտիր հոգաբարձու պ. Աղէքսանդր Քալանթարեանին:

Le même.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶՆԵՐ

(«Հայրենիք»)

—

Մանկապարտէզներն ընդունելութիւն գտան Պօլսոյ մէջ: Ուսումնական խորհուրդն իր կանոնագրին մէջ ընդունած է այդ նոր դրութիւնը.

Քանի մը թաղերու մէջ ծաղկոցը վերածուած են մանկապարտէզի: Շատ թաղերու մէջ ալ բացուած են մանկապարտէզներ՝ լոկ ունևորներու տղաքներու համար, ճիշդ ծաղկոցի քով, կարծես ծաղկոցի տղաքը այդ դրացութեամբ աւելի դժբաղդ ընելու համար: Մէկ քանի հատ ալ մասնաւոր անձինք բացած են:

Մայրաքաղաքիս մէջ անոնցմէ 18 ը այցելած եմ, և փորձառութեանս ու գիտողութեանցս արդիւնքը պարզելով, կը յուսամ որ իր օգուտը ունենայ:

—

Նախ՝ քանի որ Մանկապարտէզի գաղափարը այսքան սիրալիր ընդունելութիւն գտած է ամէն կողմը, ինչո՞ւ բոլոր ծաղկոցները չեն կերպարանափոխիր և տղաք փոխանակ ծեծ ու պատիժ կրելու, ամբողջ օրեր անշարժ նստարաններու վրայ անշարժ նստելու, այբ-բեն-գիմ և այլն գոց սորվելու, 1—10,000 թիւերը թութակօրէն համրելու և համարեա ամբողջ օրն ալ պարապ մնալու, ինչո՞ւ կ'ըսեմ տղաքը անուշ խօսքերն չվարժեցնել, ինչո՞ւ մարմնամարզական խաղեր ընել չտալ, ինչո՞ւ կարդալ-գրելը զուգընթացաբար, դիւրին, եղանակաւ, չորս գործողութիւնները պուտուգանիկներով ու ձողիկներով և կոտորակները թղթէ երիզներով մինչև 10 միայն չսորվեցնել, և յարմար նստելու համար ինչո՞ւ նստարաններու բարձրութիւնը չիջեցնել: Այս ամէնը մեծ ծախքի կարօտ չէ: Բաւ է միայն որ վարժուհին կիրակնօրեայ վարժարանի դասընթացքն աւարտած ըլլայ, ուր տեսած պիտի ըլլայ ո՛չ միայն այն ինչ որ պիտի և ինչպէս պէտք է սորվեցնել, այլ և սորված պիտի ըլլայ գթալ տղոց և սիրել իր արհեստը: Շատ ծաղկոցներու մէջ սոսկալի անգթութիւն կը տիրէ:

Վարժուհին քանակը ձեռքը անխնայ կը զարնէ աստին անդին, «անոնք վարժ են» ըսելով տղոց մազերը կը փետտէ, ականջներէն արիւն կըհոսեցնէ. նոյնպէս անօթի կը պահէ խեղճերը, ճաշէ զրկելով. Վարժուհիին տուած պատիժները չեն բաւեր, դռնապանն ալ իրաւունք ունի ծաղկոցը մտնելու և իր հաստ գաւազանովը ծեծ քաշելու. Տղոց գանգատը լսող, անոնց գթացող չի կայ, որովհետև աղքատի զաւակ են:

Ա՛հ, եթէ դիպուածով ունենայի զաւակ մը զոր ծաղկոցին մէջ: Անիկա, նայեցէք, դժբաղդ չէ. ընկերները ամէն առաւելութիւններ կը վայելէ և իր նմաններուն չարչարանքները, զրկանքները իր սիրտը կը կարծրացնեն: Ինք ալ ազատ պիտի ըլլայ, ընկերները արգիլուած. ատ է օրէնքը. միթէ ուրիշ կերպ կրնա՞յ ըլլալ:

Անտանելի են, կ'ըսեն, ծաղկոցներու տղաքը: Այո, կը հաւատամ. և կը սոսկամ երբ մանկապարտէզ կ'ընդունուին ծաղկոցէ քանի մը աշակերտ միասին. Վարակումէ կը վախնամ: Մէկը մանկապարտէզին ազդեցութիւնը կը կրէ, իսկ եթէ մէկ քանին միատեղ ընդունուին՝ կ'ազդեն մանկապարտէզի տղայոց վրայ:

Ամբողջ օրը պարապ մնալուն պատճառաւ ծաղկոցի տղան կէս բաներու վարժուած է, Զինքը աշխատանքի սորվեցնել շատ դժուար է: Հայոց անոր հայհոյանքները, աղտոտութիւնը, ընկերներուն համար քսութիւն ընելը, ի՞ր մէկ պակասութիւնը թուել:

Բայց եթէ վարժուհին սիրէ իրեն յանձնուած տղաքը, եթէ գիտենայ ինչ ձևով սորվեցնել այս ինչ կամ այն ինչ առարկան, եթէ տղաքը վարժեցնէ աշխատանքի և մաքրութեան, ընէ զանոնք գիտող, խորհող, այն ժամանակ ծաղկոցի տղան ալ անտանելի չըլլար: Տղաքը սիրելով, ինքը երջանիկ կըլլայ, երջանիկ կըլլայ, որովհետև պիտի տեսնէ անոնց յառաջադիմութիւնը, անոնց սէրն ու գգուանքը պիտի վայելէ:

Հիմա, ծաղկոցի վարժուհիները սպարզապէս բանտապետներ են:

—

Գանք մեր յուկէտին, մանկապարտէզներուն.

Առաջին ծաղկոցը որ վերածուեցաւ Ֆրէօպէլեան դրութեան, Օրթագեղինը եղաւ: Մինչև այդ օրը բացուած էին մէկ քանի մանկապարտէզներ, բայց հարուստներու տղոց համար, կամ մասնաւորներու նախաձեռնութեամբ, որոնց մէկ քանին վարպետ-տուտուներու տեղը կ'ուզեն բռնել, պահելով տղաքը մինչև կէս գիշեր, երբեմն գիշերն ալ և նոյն իսկ Զատկի օրերուն վարժարանին մէջ, այսպէսով ուզելով մրցել թաղային մանկապարտէզներուն հետ:

Օրթագեղի մանկապարտէզը լաւրութիւնը վերցուց: Գուցէ ան ալ չըլլար այդ բանը, եթէ տիկին Ց. Նորատունկեան բոլոր ծախքերը իր վրայ չառնէր, նոր նստարաններ շինել չտար, բոլոր նուէրները չզնէր, պաշտօնեաներու ամսականները ինքը չհոգար: Մանկապարտէզը կազմակերպելէն վերջը, մօտ հինգ ոսկի եկամուտով յանձնեց թաղին:

Տիկին Ց. Նորատունկեանի փափաքն է իբր տիպար-մանկապարտէզ տեսնել զայն, և իր բաղձանքին պիտի հասնի քիչ ատենէն: Նա այժմ օրինակելի կը հանդիսանայ յուլիս ամսուն վեց տղայ շրջանաւարտ հանելով, որոնք իրենց պէս պիտի կարենան մտնել նախակրթարանի երկրորդ կարգը: Ուսումնական խորհուրդը և քանի մը անձեր պիտի հրաւիրուին քննութեան և իրագործուած յառաջադիմութեանը ականատես պիտի ըլլան, եթէ հաճին պատուել իրենց ներկայութեամբ անդրանիկ մանկապարտէզը:

Այո, Օրթագեղի մանկապարտէզը օրինակ պիտի ըլլայ և ցուցնէ, որ այդ տեսակ հաստատութիւնները պէտք է հետևին ծրագրի մը և թէ բաւական չէ կարմիր գդակ կրելը, երգելը ու ցատկելը մանկապարտէզ կոչուելու համար:

Մէկուկէս տարիէ աւելի է, որ Օրթագեղի ծաղկոցը կերպարանափոխուած է, և միայն Պալաթի մէջ է, որ ունևոր տղաքներու համար ծաղկոցին կից մանկապարտէզ բացուեցաւ երիտասարդներէ կազմուած խնամակալութեան նախաձեռնութեամբ, եթէ ոչ անկէ ի վեր բացուած մանկապարտէզները ծաղկոցներն են, որ դրութեան հետ փոխեցին անուննին և մէկ քանին ալ առանց դրութիւնը բոլորովին ըմբռնած ըլլալու կը կրեն մանկապարտէզ անունը:

Այս վերջիններու տեսակէն մէկը այցելեցի այս օրերս:

Ընդարձակ յարկին վրայ կը գտնըւէին երեք կարգի բաժնուած կարմիր գդակներով 70 ի չափ տղայ: Վարժուհիները կոկիկ, մաքրութիւնը կը տիրէր ամէն կողմ: Կանոնաւոր մանկապարտէզի մէջ տղաքը տարիքի համեմատ պէտք է նստած ըլլային, այլ ոչ թէ ինչպէս հոն երեք տարու մը քով ինը տարեկան մը. ըսին, որ ինչպէս մեծը այնպէս ալ միւսը կարդալ չեն գիտեր, եղեր:

Երկու ժամէ աւելի մնացի հոն, և առաջին կարգի տղաքը, ինչպէս ծաղկոցներուն մէջ, անշարժ, նստած էին: Տեղեկացայ, որ այդպէս են գրեթէ ամբողջ օրը:

Երկրորդ կարգի աշակերտներու սիրունութիւնը գրաւեց զիս. քովերնին նստելուդ պէս քեզ կը շոյեն, կը սիրեն, հանդիպած տեղը կը համբուրեն: Կուզէի որ բոլոր մանկապարտէզներու մէջ այդ սիրունութիւնը տիրէր: Իրենց տարիքին համեմատ շատ առաջ գացած չէին: Պատասխանները գոց ըրած էին: Վարժուհին, որ վկայեալ է Կիրակնօրեայ վարժարանէն, ինչո՞ւ այդ սխալը կ'ընէ: Իր արհեստին վրայ այնքան հասուն գաղափարներ ունի, որ կրնայ առանց վախի իր ուզածին համեմատ և ոչ ուզածին պէս վարուիլ: Քայլերգը և մարմնամարզական խաղը շատ կանոնաւոր էին:

Երրորդ կարգը, որ արդէն մանկապարտէզի շրջանը մէկ տարի առաջ աւարտած ըլլալու էր, շատ ետ մնացած էր: Վարժուհին, տետրակը ձեռքը, առաջին նուէրի դասը կուտար: Մանկապարտէզի կազմակերպողը օրինակելի դասեր չի տար վարժուհիներու ներկայութեան, կամ եթէ կուտայ՝ տետրակի մէջէն կարդալով կուտայ, ու այդ ձևը տեսայ ես դպրոցին մէջ: Գրքերէն թարգմանածը գոց ընել կամ գոց ընել տալ շատ սխալ ըմբռնում է: Վարժուհին պէտք է տիրացած ըլլայ իր տալիք դասին, ինք իր ձևով պէտք է դաս տայ, եթէ հնար է՝ ստեղծէ, տեսածներուն յարմարեցնէ, որպէս զի կարենայ նոյնը պահանջել տղոցմէ: Գոց ընելով միտքը չի մշակուիր, այլ միայն յիշողութիւնը:

Ծաղկոց մըն ալ այցելեցի մանկապարտէզ անուամբ, ուր սքանչելի մարմնամարզ կ'ընէին: Տղաքը աղտոտ էին, վարժարանն ալ: Երկու վկայեալ վարժուհի ունին և կարդալ-գրելու դասը ուսուցիչ մը կուտայ եղեր: Սխալ դրութիւն. Նախ, որովհետև տղան պէտք է մէկ անձէ միայն դաս առնէ, որպէս զի մէկ դասը միւս դասի հետ կապուի, և երկրորդ՝ էրիկ-մարդ, նոյն իսկ կին մը էրիկ մարդու ձեռքով, չի վայլեր մանկապարտէզի մէջ: Ֆրէօպէլը ստեղծեց մանկապարտէզի դրութիւնը, բայց վարժուհիներ պատրաստեց զայն իրագործելու և գործը շարունակելու համար:

Մանկապարտէզ մը կայ որ ընտանիքի մը կը նմանի: Մեծ տղաքը՝ 6 7 տարեկանները, պզտիկները՝ 3 տարեկանները կը խնամեն: Սէր կը տիրէ ամենուն սրտին մէջ: Միշտ ժպտուն, միշտ ուրախ, զուարթ, իրենց վարժուհիին պէս: Մրջիւններու նման կ'աշխատին: Գացէք իրենց բանջարանոցը. իւրաքանչիւր տղայ իր ածուն ունի. ձմերուկ, սեխ, տեսակ տեսակ կանաչեղէններ ցանած են. հասած եղիպտացորենը, իրենցմէ բարձր պիտի ըլլայ եղեր: Ուսանելէ չեն կըշտանար. խաղալով ալ կը սորվին. մէկ տարեկան վկայական պիտի առնեն եղեր. հիմակուընէ շրջանակներ կը հիւսեն:

Մանկապարտէզ մըն ալ կայ, ուր օրինակելի կարգ կանոն կը տիրէ: Տղոց աղէկ կողմերը աչքէս չեն զարներ, այնքան զմայլելի է վարժուհին: Ան ինչ դասաւանդութեան եղանակ, ան ինչ անուշ և սիրուն վարմունք տղոց հետ: Մանուկները աղմուկ կը հանեն խաղալու ատեն. կը բաւէ որ օրիորդը նշան մը ընէ և տղաք իր շուրջն են. ցուցամատը շրթունքներուն տանելով կամացուկ կամացուկ կըսէ. «Տեսնեմ որը ձենէ առանց աղմուկի պիտի վազէ», և դառնալով ամենէն անառակին գլուխը շոյելով. «Արդեօք դո՞ւն»: Եւ վստահ է որ իր ուզածը կըլլայ:

Երեք կարգին միասին դաս կուտայ. մէկը առանց դրդումի չի թողուր, մէկը անուշադիր չի ձգեր: Քառասունը աշակերտ կը կառավարէ 3—8 տարեկան. կարգ կարգ, զատ զատ նստարաններու վրայ նստած են իր դիմացը: Գնդասեղով չի ծակծկեր ձեռքերնին. արձանի պէս սենեակին մէջտեղը չի կանգնեցներ տղան երբ ուշանայ դպրոց գալու. ջրէ չի զրկեր խօսողը, կամ բերանը սպառն. ջուր չի լեցներ նոյն յանցանքին համար: Ինքը աշակերտներէն ուշ չի գար վարժարան, թէև ուրիշ գիւղ կը բնակի: Զբօսանքի ատեն այցելութեան չերթար և չի ձգեր տղաքը առժամանակեայ վարժուհիին կամ աւելի գէշ՝ տնտեսուհիին խնամքին: Անուշ ժպիտով մը թևը կամթելով տղուն տեղը չի փոխեր: Ո՛չ, ան ծաղկոցներու մէջ ծերացած չէ, այն վարժուհիններէն չէ, որոնք վախցնելով կը հասնին այն հնազանդութեան որ յառաջ պիտի գայ առանց խստութեան սիրոյ միջոցաւ:

Այս մանկապարտէզն ալ ունի բանջարանոց, ուր շատ ծաղիկներ և պտուղներ կան: Այդտեղ կ'անցընեն տղաք օրը երեք ժամ, բայց օր մը չպատահեցաւ որ ծաղիկ մը, պտուղ մը փրցնեն: Վարժուեր են յարգել ուրիշի սեփականութիւնը և պահպանել իրենց ունեցածը: Մէկ տարիէն ատոնց օրիորդը օրինակելի վարժուհի պիտի ըլլայ:

Մանկապարտէզ մը կայ, որ կը յետադիմէ: Վարժուհին կարող է, բայց աշակերտներուն թիւը այնքան շատ է որ չեմ սխալիր եթէ ըսեմ որ կանգնելու տեղ չի կայ. դեռ կը շարունակեն աշակերտ ընդունիլ, 12 տարեկան մանչեր ալ որ կարդալ չեն գիտեր: Բացարձակապէս բան մը չեն սորվիր. չսորվելէ զատ գիտցածնին կը մոռնան: Աղջիկ մը կայ որ ձմեռը այդ մանկապարտէզը գացած էր և գարնան դառնալով իր բնակած գիւղը՝ կրկին մտած իր առջի մանկապարտէզը: Նստեցուցին զինքը իր ընկերներուն քով. ամէն բան մոռցած էր և իրմէ վարի կարգին անգամ չէր կրնար հետևիլ: Մոռցածին փոխարէնն ալ հայհոյանքներ սորված էր: —Ա՛խ, սա ի՞նչ է եղեր հրեշտակս, կ'ըսէր օրիորդը:—Ա՛լ հրեշտակ չեմ. սատանայ եմ, օրիորդ, պատասխանեց:—Իրաւցնէ:

Այցելած եմ տեսակ մը մանկապարտէզ մէկ տարի առաջ և անցեալ ամիս: Մէկ քայլ յառաջդիմութիւն չեն ըրած. ասկէ զատ դասերը չեն փոխած: Նոյն հարցումները. «Հաւատքով ի՞նչ ես», «Երկաթը ուսկից կ'առնեն», «կրնա՞ս 1 էն մինչև 100 համրել», և նոյն գոց ըրած պատասխանները ամէնքը միաբերան, առանց մէկ խօսքը միւսէն առաջ կամ ետ ըսելու: Հողաթափներով վարպետ-տուտուի տեսակ վարժուհի մը կանգնած է վրանին և օգնական մըն ալ ունի, որուն արհեստը կը սովորեցնեն. ան ալ վարպետ եղեր է: Մանուկները շարուած են սենեակին շուրջը. լոյսը առջևէն, ետևէն, աջէն և բաղդի բերմամբ մէկ քանիին ալ ձախ կողմէն կուգայ: Այստեղ ալ տղաքը նստած են մեծը փոքրի քով, ոչ թէ որովհետև կարդալ-գրելը հաւասարապէս գէշ կամ աղէկ գիտեն, այլ տուած ամսաթոշակի համեմատ:

—Ասոնք, տիկին, 30 ղրուշնոց են, ասոնք 20, ասոնք 10, ասոնք ձրի, կ'ըսէ վարժուհին, և իջնելով ձայնը արհամարհանքի շեշտեր կ'առնէր ա՛լ յետ լսելու ատեն խեղճ տղաք գետնին տակը մտնելու են պէրդապէս: Գուցէ աւելի երջանիկ ըլլան հոն:

Այս տխուր նկարագրութեամբ կը վերջացնեմ գրութիւնս և կը հարցնեմ ինքնին թէ Մանկապարտէզի գործը չի՞ պիտի վնասուի, զուրկ որոշ ծրագրէ մը և կանոնաւոր ուղղութենէ մը որ նոյնն ըլլայ ամէնուն համար:

Գայեանէ Մ…եան.

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Կարնոյի սպանման օրից եւրոպական մամուլը շարունակ լուրեր էր հաղորդում թէ այսօր վաղը բոլոր եւրոպական պետութիւնները կըմիանան անիշխանականների դէմ արմատական միջոցներ գործ դնելու: Սակայն այդ լուրերը շարունակ մնում էին լուրեր, որովհետև եւրոպական պետութիւններից ոչ մինը չէր համաձայնում իր վրայ առնել այդ գործի նախաձեռնութիւնը: 'Ի հարկէ ծիծաղելի կըլինի կարծել թէ այդ նախաձեռնութեան բացակայութեան պատճառը երկիւղն է: Կայ ճշմարիտ երկիւղ և այդ վերաբերում է ոչ թէ անիշխանականներին, այլ տիրապետող օրէնքներին: Եւրոպական օրէնքի մէջ ազատութեան գաղափարն այնքան զտուած է, որ նա դժուարանում է «անձնական ազատութեան» վրայ բռնանալ: Անգլիայի, Ֆրանսիայի պարլամենտներում և եւրոպական ամենաբարձր պետական շրջաններում շարունակ մշակվում էր այն հարցը թէ ինչ մի իդէա կայ անիշխանականների մէջ, որ կարող լինի արդարացնել նրանց գործունէութիւնը. կա՞յ արդեօք մի առաքելութիւն, մի սկզբունք որ այսպէս թէ այնպէս կապ ունենայ մարդասիրութեան հետ: Հարցի քննութիւնը ցոյց է տալիս որ այդ հրէշաւոր դասակարգի միակ սկզբունքը բոլոր սկզբունքների ոչնչացնելն է, միակ իդէալը—մարդկային արիւնն է, միակ քաղաքակրթական զէնքը՝ դաշոյնն է և ռումբը: Ուշադրութեան արժանի է որ նոյն իսկ ինքը Կէզարիօն, որ իր չարագործութիւնն աշխատում է բացատրել մարդասիրական նպատակներով, նոյն այդ Կէզարիօն ձեռները լուանում է անիշխանականներից և չէ ցանկանում որ իրեն համարեն նրանց գործիք: Սրանք են իսկական հրէշաւոր մարդիկ, որոնք ոչխարի պէս քշվում են առաջ և չարագործութիւնը կատարելուց յետոյ իրենք իրենցից վախենում են: Ամենադառն բարկութեամբ դրանց դէմ դուրս էր եկել նորերս անգլիական յայտնի քաղաքագէտ լորդ Սալզբըրի, որի բիլլը պարլամենտի առաջին նիստում չընդունուեց: Յարգելի լորդը չը յուսահատուեց և յուլիսի 6-ին պարլամենտի երկրորդ նիստում կրկին առաջարկեց իր բիլլը անիշխանականների դէմ, որ և ընդունուեց ճնշող մեծամասնութեամբ: Լորդ Սալըզբըրի իւր ճառի մէջ ապացուցանում էր, որ անիշխանականների վերջին չարագործութեան նախապատրաստութիւնները եղել են Անգլիայում, որ Բրիտանական ոստիկանութիւնը անհրաժեշտ միջոցներ չէ ձեռք առել ժամանակին արգելելու յանցաւոր չարագործութիւնները: Նշանաւոր են լորդի այն խօսքերը, որով նա անիշխանականներին զանազանում է իդէալի մարդկանցից.—«Մաձինիի և Կօշուտի ժամանակներից շատ բան է փոխուել Եւրոպայում, ասում է Սալիզբըրի:—Այժմեան դաւադիրները այլ ևս ազատութեան առաքեալներ և բռնակալութեան զոհեր չեն»: Այս խօսքերը շատ նշանաւոր են, մանաւանդ երբ նրանց արտասանում է մի պետական մեծ անձնաւորութիւն. դրանով նա արդարացնում է այն բազմաթիւ նահատակներին, որոնք իսկապէս ոգեւորուած հայրենիքի սիրով, սիրով դէպի մերձաւորը, քաջութիւն են ունեցել տիրապետող կարգերի դէմ կռուել և զոհել իրենց անձնաւորութիւնը. ժամանակի ընթացքում այդ հսկայական տիպարը մանրացել է, ժամանակի ընթացքում փոքրացել է, ծոյլ, ձրիակեր սրիկաներ առաքեալների վերարկուներ հագած սրբապղծել են նահատակութեան ասպարէզը, իրենց զգեստների տակ թաքցնելով անխտիր մահացուցիչ դաշոյն և ռումբ: Թէև այս րոպէին եւրոպական իւրաքանչիւր պետութիւն առանձին առանձին աւելով ժողովում է փողոցներից այդ թունաւոր պարազիտներին, բայց ընդհանուր միաբան միջման առաջին խթանը տալիս է Անգլիան լորդ Սալզբըրիի բերանով: Եւ Անգլիան չէ ամաչում խոստովանել որ իր ծայրայեղ մարդասիրական օրէնքը չարագործների ձեռին զէնք է դարձել, պէտք է խլել նրանց ձեռքից այդ զէնքը և դարձնել դէպի նոյն իսկ նրանց կուրծքը:

Այդ խնդրում ամենից աւելի վճռական քայլն արել է Իտալիան: «Օրէնք չճանաչող» անիշխանական դասակարգի վրայից վերցրել է օրէնքի պաշտպանութիւնը և նրանց դատելու համար առանձին «հասարակական անվտանգութեան վրայ հսկող յանձնաժողովներ» նշանակել: Դուք օրէնք չէք ընդունում, ասում է Իտալիան, նա էլ ձեզ չպէտք է ընդունի:

Միակ միջոցը, որով կարելի է ոչնչացնել այդ արեան ծարաւի հրէշներին:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՉԻՆԱՍՏԱՆ.—«Ostasiatis Lloyd» լրագիրը որ մասնաւորապէս նուիրուած է արևելեան ասիական հարցերին հետևեալ մանրամասնութիւններն է հաղորդում Կօրէյի ապստամբութեան մասին. «Ապստամբները պատկանում են Տօնգխատօ ծայրայեղ պահպանողական կուսակցութեան, որ խստիւ պահպանում է չինական աւանդութիւնները և սովորութիւնները և հալածում է ամեն մի նորութիւն: Այդ կուսակցութիւնը մանաւանդ կատաղի կռիւ է մղում քրիստոնէութեան հետ: Դրա գլխա-

Дозволено цензурою. Тифлисъ, 14 Iюля 1894 года.
Типографія М. Мартиросьянца, на Орбел. ул., № 1—3

ւոր նպատակն է արտաքսել տիրող արքայական ցեղը, որ տիրապետում է Կորէային 500 տարուց աւելի։ Ապստամբների թիւը 50,000 է. Նրանք, մեծ մասամբ, շատ լաւ զինուած են՝ դեռ առաջին ապստամբութեան ժամանակ պետական զինանոցներից կողոպտած հրացաններով։ Ապստամբ նահանգների կառավարիչները դիմել են թագաւորին օգնութիւն խնդրելով, բայց Սէուլից ուղարկուած զօրքերը յաղթահարուած յետ են փախել։ Ապստամբները մի նշանաւոր զինուորական պաշտօնէի բռնել են և ողջ ողջ այրել։ Յաղթում են թէ հրացանաձիգ և թէ թնդանօթաձիգ զինուորներին և փախցնում։

Ապստամբների թիւը օրէ օր աւելանում է։ Խոնխունդօ գաւառից ապստամբների հետ միացել են 15,000 հոգի։

ՄԻԱՑԵԱԼ-ՆԱՀԱՆԳՆԵՐ.—Ամերիկայի Միացեալ-Նահանգների դպրոցների վիճակագրութիւնը։ Դպրոց յաճախող երիտասարդաց թիւը Միացեալ-Նահանգներում հասնում է 14,669,069-ի, որ կազմում է ամբողջ բնակչութեան աւելի քան 23%։ Եթէ այս թուին աւելացնելու լինինք երեկոյեան, տեխնիկական և առևտրական դպրոցների դասընթացներ հետևողները, ապա ուսումնարան յաճախող բոլոր երեխայոց թիւը հասնելու է 15 միլիոնի։ Այս թուից 96% իրենց կրթութիւնն ստանում են ըստորին դասարաններում, իսկ բարձրագոյն դպրոցներում հասում են ընդամենը 1%։ Ուսուցիչների թիւը 425,000 է. այս թուից միայն 33% արական սեռին են պատկանում։ Հասարակական դպրոցների ծախսերը (պետական և հասարակական) կազմում են տարեկան 146,800,163 դոլար կամ 290 միլիոն ռուբլի, որ անում է ամեն աշակերտի վրայ 35 ռուբլի։ Ուսուցիչների ամսական միջին վարձատրութիւնը 45 դոլար է կամ 90 ռուբլի, ուսուցչուհիները միջին թուով ամսական 73 ռուբլի են ստանում։ Դպրոցներում պարապում են տարեկան 135 օր։

«ԱՐՁԱԳԱՆՔԻ»

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

Յուլիսի 12-ից.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. — Նորին կայսերական մեծութիւններն Օգոստափառ զաւակների հետ երէկ վերադարձան Ֆինլանդիայից Պետերհօֆ։

Յուլիսի 13-ից.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Դանուբի և Կերչի մէջտեղ գտնուած Սև ծովի ափի նաւահանգստներից եկող բոլոր նաւերը ենթարկվում են բժշկական զննութեան. Վոսֆորում Կիպրոս և Մալթա կղզիներում 5-օրեայ կարանտին է սահմանուած Սև ծովից եկող նաւերի համար։ Աւստրիայում սահմանուած է որ Ռուսաստանից եկողները տեղ հասնելուց յետոյ պիտի ենթարկուեն հինգ օր բժշկական հսկողութեան. Ռուսաստանից բոլոր եկողներին՝ Բուկովինայում տրվում է ժամանակաւոր վկայական անցագրերի փոխարէն, որ նրանցից առնվում է և նրանց կըվերադարձնուի միայն նշանակուած տեղը հասնելուց յետոյ։ իսկ կարճ ժամանակով Բուկովինա գնացողների անցագրերը մնում են աւստրիական սահմանի իշխանութեանց ներկայացուցիչների մօտ մինչև ճանապարհորդի վերադառնալը։

ԲԵՐՆ. — Դաշնակցութեան խորհուրդն աքսորեց կրկին երեք անիշխանականների, որոնցից մէկը Ֆրանսիացի է և երկուսը գերմանացիք։ Անիշխանականների դէմ սահմանուած օրէնքի գործադրութիւնն սկսվում է այսօրուանից։

ՓԱՐԻԶ.—Անիշխանականների դէմ օրէնքի քննութեան միջոցին, երբ խօսում էին անիշխանականների դատերի տպագրութեան սահմանափակելու մասին, մի պատգամաւոր նկատեց, որ օրէնքը չէ կարող արգելել արտասահմանեան լրագրներին անիշխանական գործերի դատարանական քննութեան մանրամասնութիւնները արտագրելու։ Մինիստրը պատասխանեց որ այդ լրագրները վաճառողները դատի կենթարկուին. օրէնքի նպատակն է անիշխանականների տէօրիաների հրատարակումն արգելել, այն տէօրիաների, որ նրանք բացատրում են դատարանում. Ներքին գործոց նախարարն իրաւունք ունի արգելել որ արտասահմանեան լրագրներ չբերուին Ֆրանսիա. պատգամաւորներից մինը հարցրաւ թէ ինչու մամուլը պիտի նկատուի իբրև արտօնուած արգելինաբերութիւն, այդ խօսքերը բողոք պատճառեցին հրապարակախօսների օթեակում։ Նախագահի հրամանով կարգապահները հեռացրին օթեակից բոլոր ֆրանսիացի և արտասահմանեան մամուլի ներկայացուցիչներին, որոնք եռանդով բողոքում էին։ Մի քանիսին ուժով հեռացրին։

ԶԱՆԱԶԱՆ

Բագուի տեղական լրագրի ասելով այնտեղ սկսել են անտանելի շոգեր։ „Յուլիսի 10-ին արեգակի ջերմութիւնից ուշաթափուել ընկել են երկու կին և մի ձի։"

Կարծէք արգեօք վատ երաժշտութիւնը առիթ լինել որ նկեցի համար տան վարձելու պայմանագիրը ոչնչացնել։ Այդ հարցն այս օրերս քննվում էր Պետերբուրգի հաշտարար դատաւորներից մէկի ատեանում։ Վաճառականի կին Բ. ի ամարանոցում ընտանիքով ապրում էր պաշտօնից հրաժարած վախմիստր Կրուտիշով. Ներքևի յարկում էլ ապրում էր տան տիրուհին տիկին Բ. որ իր հետ բերել էր ամարանոց „արիստոն" անուանուած երաժշտական արկղը։ Այդ արիստոնը որ շարունակ զանազան պօլկաներ և վալսեր էր զըրացնում, սաստիկ անհանգիստ էր անում Կրուտիշովին. մի քանի անգամ նա մարդ ուղարկեց տիկին Բ. ի մօտ խնդրելով մի քիչ մեղմացնել իր գեղարուեստական զուարճութիւնը, բայց անօգուտ։ Կրուտիշով տեսնելով որ արիստոնին յաղթահարել չէ կարող, իրեղէնները հաւաքեց և փոխուեց ուրիշ ամարանոց։ Տիկին Բ. խնդիր տուաւ հաշտարար դատաւորին և պահանջում էր „ըստ պայմանի" 75 րուբլի Կրուտիշովից. Կրուտիշովը, որ մի պատկառելի ծերունի է, դատարանում ասաց հետևեալը. „Պ. դատաւոր, եթէ բնակարանի խոնաւութիւնը կարող է ծառայել իբրև հիմք պայմանը խախտելու, այն ժամանակ այն երաժշտութիւնն էլ, որով ինձ տանջում էր տիկին Բ.-ն. կարող է նոյնպէս առիթ լինել մեր պայմանը խախտելու։ Խոնաւութիւնը վնասում է մարդու առողջութեանը, իսկ այդպիսի երաժշտութիւնը ինձ կարող էր խելագարեցնել։ Ես, պ. դատաւոր, 69 տարեկան եմ, գլխացել եմ Լեհական պատերազմի սարսափներին, բայց տիկին Բ.-ի երաժշտութեան պատճառած տանջանքն աւելի սաստիկ է։ Ես եկել եմ ամարանոց հանգստանալու, կազդուրուելու, շատ սիրում եմ լաւ երաժշտութիւնը, բայց դա երաժշտութիւն չէ, այլ եգիպտական տանջանք, ինկվիզիցիա"... Դատաւորը հիմնուելով ծերունի Կրուտիշովի խօսքերի և վկաների ցուցման վրայ, որոնք պնդում էին թէ արիստոնն օր ու գիշեր ածում էր պատշգամբում, վճռեց մերժել տիկին Բ-ի պահանջը։

Խմբագիր-Հրատարակիչ՝ ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիւրակի օրերից.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հիւանդութիւնների։

Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի և նեարդային հ.

Դ. Գ. ԲՈՒԴԿՈՎՍԿԻ—10—11 ժամը ներքին, երեխայոց և կանանց հ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—1—1½ ժ. ականջի կոկորդի և քթի հ.

Կին-բժիշկ ՏՈՒՐԲՈՎԻՉ—12½—1 ժ. կանանց հ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—6—7 ժ. Սիֆիլիսի և մէզի ու սեռական օրգանների հ.

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.

Ի. Ե. ՖՐԱՆՑԻՈՒՍ—7—7½ ականջի, կոկորդի և քթի ու նեարդային հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ.

Ա. Գ. ԴՒԻՐԿՕ քիմի-խոշորացուցական հետազօտութիւն է անում մէզի, խխի, արեան, կաթի և այլն.

Վճար 50 կ. համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին.

Հիւանդանոցումը ընդունվում են և ԳԻՇԵՐՕԹԻԿ ՀԻՒԱՆԴՆԵՐ.

Հիւանդանոցի վերատեսուչ՝ Բժշկապետ Նախասարդեան.

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

(Մուխրանեան փ., տ. Կուզանեանի, № 15. հիմնել են Թիֆլիզի քաղաքացիները երջանկ հիւանդների համար 1866 թ. ապրիլի 4-ի յիշատակին).

Հիւանդների ընդունելութիւն ամեն օր, բացի կիրակի օրերից, ձմեռն առաւօտեան ժամը 9—1, ամառը (յունիսի, յուլիսի և օգոստոսին) առաւ. ժամը 8—12.

Վ. Մ. Արծրունի — ներքին, երեխանց և ջղային հիւ. ժամը 10½—12 ամեն. օր։

Կ. Ա. Ղամբէ—ներքին և երեխանց, ժ. 10½—12 ամեն օր։

Գ. Գ. Գուլբենկեան—խիրուրգ. և մէզի անդ. ժ. 11—12 ամեն օր։

Կին-բժ. Մ. Ա. Խուդաբեկեան—կանանց ժ. 9—11 ամեն օր։

Ն. Գ. Կոլոմեեց — ներքին և երեխանց, ժամը 12—1 ամեն օր։

Ս. Ն. Լևին—խիրուրգ. և մէզի անդ. ժ. 11—12 ամեն օր։

Մ. Ա. Միրզոեան—ներքին և վեներական, ժ. 12—1 (երկ. չոր. և շաբ. օր.)։

Ա. Գ. Մաղալեան—ականջի, կոկորդի և քթի, ժ. 9—10 ամեն օր, բացի հինգշաբթի օրուանից։

Կին-բժ. Լ. Ե. Մանթաշեանց—կանանց, ժամը 11—12 ամեն օր։

Ե. Ա. Ռոշալ — ներքին, երեխանց և ատամի, ժամը 9—10 ամեն օր։

Մ. Ա. Ռեխտման—ներքին և ջղային, ժամը 11—12 ամեն օր։

Գ. Ն. Սարաջեան—ներքին, մէզի անդ. և վեներական, ժամը 11—12 ամեն օր։

Գ. Ա. Թարխանեան — ներքին և խիրուրգ., ժ. 11—12 ամեն օր։

Կին-բժ. Մ. Ա. Ջիմլա—աչքի և կանանց, ժամը 11—12 ամեն օր։

Ատամնաբոյժ Ա. Օ. Օրբէլի—ատամներ, ժամը 10—11 ամեն օր։

Կոնսուլտասիոնը երեքշաբթի և ուրբաթ օրերը ժ. 12—1. Ծաղկի պատուաստումն—չորեքշաբթի և շաբաթ օրերը, ժամը 9—1։

ՀԱՒԼԱԲԱՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

(Կախեթինսկայա փ., տ. Տէրտէրեանի)

Մ. Ա. Բաղդասարեան—ժամը 11—12 ամեն օր։

Կին-բժ. Մ. Ա. Խուդաբեկեան—կանանց, ժ. 11—12 երեքշաբթի և ուրբաթ օրերը։

ԽԱՐԹՈՒԽԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

(Բաննիա փօղոտա, տ. Էնֆիաճեանի)

Գ. Բ. Տէր-Աստուածատրեան—ժամը 11—12 ամեն օր։

Կին-բժ. Մ. Ա. Խուդաբեկեան—կանանց, ժ. 11—1 երեքշաբթի և ուրբաթ օրերը։

Դեղատներ.—Չքաւոր անձերին բժշկական խորհուրդ և դեղեր տրւում են ձրի։

Քաղաքային բաժարանի կառավարիչ— Գ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

ՓՕՍՏԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆԸ ՎՐԱՑ ՊԵՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

Թիֆլիզից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքը ուղևորվում է առաւօտեան 7 ժամին, գիշերում է Մլէթի կայարանում, Վլադիկավկազ է հասնում հետևեալ օրը ժամը 7-ին երեկոյեան։

Հինգ հոգու տեղ ունեցող կառքը դարձեալ ուղևորվում է առաւօտեան 6 ժամին, գիշերում է Պասանաուր կայարանում, հասնում է Վլադիկավկազ հետևեալ օրը ժամը 10-ին երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու տեղ է հասնում հետևեալ օրը ժամը 7-ին երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) դարձեալ ուղևորվում է ճաշից յետոյ 5 ժամին և առանց գիշերելու հասնում է Վլադիկավկազ հետևեալ օրը 9 ժամին երեկոյեան։

Վլադիկավկազից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքը ուղևորվում է առաւօտեան ժամը 7-ին, գիշերում է Մլէթի կայարանում, Թիֆլիզ է հասնում հետևեալ օրը ժամը 7-ին երեկոյեան։

Հինգ հոգու տեղ ունեցող կառքը դարձեալ ուղարկվում է առաւօտեան ժամը 9-ին, գիշերում է Գուդաուր կայարանում, հասնում է Թիֆլիզ հետևեալ օրը ժամը 9-ին երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու հասնում է Թիֆլիզ հետևեալ օրը ժամը 7-ին երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) դարձեալ ուղևորվում է ճաշից յետոյ ժամը 5-ին և առանց գիշերելու հասնում է Թիֆլիզ հետևեալ օրը ½ ժամին երեկոյեան։

ՌՈՒՍԱՑ ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ամեն շաբաթ շոգենաւերի երթևեկութիւն Բաթումի, Օդեսայի և Կ. Պօլսի միջև։

Բաթումից դուրս է գալիս.

Շաբաթ օրերը (լոյս կիրակի գիշերուայ 2 ժ.) շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստները։

Կիրակի օրերը, գիշերուայ ժամը 11½-ին, խուճապ ընթացքով Եալտայի և Սևաստապօլի վրայով։

Երկուշաբթի օրերը (լոյս չորեքշաբթի գիշերուայ ժամը 2-ին) շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստները։

Հինգշաբթի օրերը ցերեկուայ ժամը 12-ին ուղիղ ընթացքով Նովօրոսիյսկի և Կերչի վրայով։

Կ. Պօլիս երկու շաբաթը մէկ անգամ երեկոյեան ժամը 7-ին։

Բաթում է հասնում.

Ուրբաթ օրերը երեկոյեան, շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստների վրայով։

Ուրբաթ օրերը առաւօտեան, խուճապ ընթացքով Սևաստապօլի վրայով։

Երկուշաբթի օրերը երեկոյեան շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստների վրայով։

Չորեքշաբթի օրերը առաւօտեան ուղիղ ընթացքով Նովօրոսիյսկի և Կերչի վրայով։

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Մարդատար գնացքը Թիֆլիզից Բաթում դուրս է գնում առաւօտեան ժ. 9-ին 30 ր. և Բաթում հասնում է երեկոյեան ժ. 9-ին 45 ր.։

Փօստային գնացքը Թիֆլիզից Բագու դուրս է գնում ցերեկուայ ժ. 1-ին 20 ր. և հասնում է Բագու առաւօտեան 7 ժ. 30 ր.։

Փօստային գնացքը Թիֆլիզից Բաթում դուրս է գնում երեկոյեան ժ. 6-ին 50 ր. և Բաթում հասնում է առաւօտեան ժ. 8-ին 15 ր.։

Մարդատար գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գալիս առաւօտեան ժ. 9-ին 45 ր. և Թիֆլիզ հասնում է երեկոյեան ժ. 9-ին 52 ր.։

Փօստային գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գնում գիշերուայ ժ. 11-ին 25 ր. 1 Թիֆլիզ է հասնում ցերեկուայ ժ. և 2-ին 25 ր.։

Փօստային գնացքը Բագուից Թիֆլիզ դուրս է գալիս գիշերուայ ժ. 11-ին 10 ր. և Թիֆլիզ հասնում է ցերեկուայ ժ. 5-ին 50 ր.։

Ամառուան գնացքը Թիֆլիզից Միխայլովօ դուրս է գնում ճաշից յետոյ 3 ժամին. Միխայլովօյից Թիֆլիզ՝ առաւօտեան 8 ժ, 10 ր. ապրանքա-մարդատար գնացքը Թիֆլիզից Դանձակ դուրս է գնում երեկոյեան 9 ժամին 20 ր., իսկ Դանձակից Թիֆլիզ է հասնում առաւօտեան 1 ժ. 30 րոպէին։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՕՐԲԱԶԱՐ ՔԱՂԱՔԻ ԾԽԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻՆ հարկաւոր է մի ուսուցիչ Ռուսերէն և հայոց լեզուի։ Ռոճիկը տարեկան 500 րուբլի է։

Յանկացողը պէտք է դիմէ հետևեալ հասցէով *Армянскъ* (Таврической губ.) Попечителю Армянскаго Приходскаго Училища. (30—11)

Նոր լոյս տեսաւ
ԻՍԱՀԱԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ
ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ
ՍԱՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆԸ
Գինն է 40 կոպ.
Ծախւում է Կենդրոնական գրավաճառանոցում և հեղինակի մօտ.
10—9

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ
հետևեալ ժողովրդական հրատարակութիւնները.
Խամլխուչէի, պատմ. վէպիկ, Քամալեանց Ս-ի գինն է . 25 կ.
Ֆէնիմօրէ Կուպէր, վէպիկ Փոքր Ասիայի կեանքից, թարգմ. Յ. Լալայեանցի գ. . . 25 կ.
Ղարէբ Մշէյի, պատկեր տաճկահայոց ներկայ կեանքից 10 կ.
Գումարով գնողին 20%
Դիմել՝ Թիֆլիզ Գիւտ քահ. Աղանեանցին կամ Կենդրոնական գրավաճառանոց։ (10—9)

Լոյս տեսաւ
Յ. ՃԱՂԱՐԲԷԿԵԱՆԻ
ՀԱՅՈՑ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆԸ
Գինն է 60 կոպէկ.
Դիմել՝ Тифлисъ, Акопу Джагарбекянъ. (10—8)

Իմ աշխատութիւններն ստանալ ցանկացողները կարող են դիմել 1) ուղղակի ինձ—Тифлисъ: Священнику Сааку Саакянцу 2) „Կենդրոնական գրավաճառանոց": Ինձ դիմող կանխիկ վճարողներն ստանում են 20% ի բաց առեալ ճանապարհածախսը։

ԱՇԱԿԵՐՏԱՑ ՄԱՍԸ
1. Սրբազան պատմութիւն հին ուխտի Ե. տարի 40 կ.
2. Սրբազան պատմութիւն նոր ուխտի Դ. տարի 40 »
3. Դասատետր կրօնի . . . . . Գ. տարի 30 »
4. Դասատետր կրօնի . . . . . Բ. տարի 20 »
5. Դասատետր կրօնի . . . . . Ա. տարի 15 »
Այս բոլոր դասագրքերը հաւանուած են հոգևոր բարձրագոյն իշխանութիւնից գործածելու մեր ծխական դպրոցներում։

ՈՒՍՈՒՑՉԱՑ ՄԱՍԸ
6. Դասագիրք կրօնի հին ուխտի ուղեցոյց 1 ռ. 75 կ.
7. Դասագիրք կրօնի նոր ուխտի ուղեցոյց 2 » 5 »
8. Մի քանի խօսք հայ կրօնուսոյցներին — 10 »
Միաբան Մողնոյ՝ Սահակ քահանայ Սահակեանց.
(10—4)

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ
ՍՏԱՆԻՍԼԱՎ ՉԱՐԱԽՉԻԱՆՈՎԻ
Articles de Paris et Nouveautées. Stanislav Charakchianoff
MAISON FONDÉE EN 1870
(Դվօրցովայա փողոց, շտաբի հանդէպը)
ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՆՈՐԱՁԵՒ ԵՒ ԳԱԼԱՆՏԵՐԵԱՅԻ ԱՊՐԱՆՔՆԵՐ.—
ԿՕՐՍԵՏՆԵՐ 2 ռ. 50 կ.-ից սկսած։ ԳԼԽԱՐԿՆԵՐ տղամարդկանց համար։ ԱՆՈՒՇԱՀՈՏՈՒԹԻՒՆՆԵՐ—անուշաբոյր օծանելիք՝ գլխաւոր գործարաններից։ Ձեռնոցներ, գուլպաներ, հովանոցներ, ծաղիկներ, հովհարներ, ալբոմներ, նեսեսէրներ, պօրտ-մօնէ։ Բիւրեղեայ, յաղճապակեայ զարդարանքի իրեղէններ։ Զգեղ իրեր ընծաների համար, խաղալիք և տիկնիկներ։
Օտարաքաղաքացոց պատուէրները կատարվում են ամենայն ճշգութեամբ։ (100—18)

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ԴԻՒԱՆ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
ԳԻՐՔ Գ.
ՍԻՄԷՈՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ
կենսագրութեամբ, յաւելուածներով և ծանօթութիւններով,
ՀՐԱՏԱՐԱԿԵՑ ԳԻՒՏ ՔԱՀԱՆԱՅ ԱՂԱՆԵԱՆՑ
(ՄԻ ՆԿԱՐՈՎ)
1096 մեծադիր էջ շքեղ տպագրութիւն, գինն է ճան. ծախ. 7 ռ. Վաճառվում է բացառապէս «Կենդրոնական գրավաճառանոցում». աշխատասիրողին դիմողները կանխիկ են վճարում.

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ
Օ. ԶԻԲԵՐՏԻ
(№ 7, Դվօրցովայա փողոց, տ. Սարաջևի, № 7)
ՍՏԱՑՈՒԱԾ ԵՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ
ԻՍԿԱԿԱՆ ՃԱՊՈՆԱԿԱՆ ՇԵՆՔԻ ԻՐԵՂԷՆՆԵՐ
ԱԼԲՈՄՆԵՐ, ԻՐԵՂԷՆՆԵՐ ՓՂՈՍԿՐԻՑ, ԿԱՇՈՒՑ ԵՒ ՄԵԼԽԻՈՐԻՑ
(150—58)

ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ
ՏՓԽԻՍՈՒՄ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՒԵԱԼ ԳՐՔԵՐԸ

	ռ.	կ.
Աղանեանց Գ. ք. Սիմէոն կաթողիկոսի Յիշատակարանը, կենսագրութեամբ յաւելուածներով և ծանօթ. Տփխիս, 1894 թ. գ.	7	—
Աշխարհագիր ըստ ժամակարգութեան Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ. դասաւորեալ և բացատրեալ ի Տէր-Յովհաննէս Աւագ քահանայէ Մկրեան երկ. տ. Կ. Պօլիս. 1891 թ. լաթակազմ և ոսկեզօծ գ. 2 ռ., նոյնը փառակազմ	2	75
Նազարեանց Իմմ. քահանայ. Յիսուս Քրիստոսի Մկրտութիւնը գ. .	—	8
» » Չարչարանքի շաբաթը գ.	—	15
Մուրատեան Մելք. եպիսկ. Հովուական Աստուածաբանութիւն . .	1	25
Մաղաքեան, Խորհուրդք հաւատացելոյ, գ.	1	35
Թաղիադեանց, Յօրհաս Թանկայ Թաղիադեանց, գ.	—	40
Իրէնք, Մահմեդի կեանքը, գ.	1	20
Քամալեանց Ս. Հէն Թագաւորի աղջիկը (հէքեաթ), գ.	—	25
Տէր-Մելքիսեդեկեան, Տիգրանու Մարկոս (վէպ. Չիրական կեանքից), գ.	—	23
Վան-Դէյք, Չորրորդ մոգը, գ.	—	5
Վոլկեան, Հեշտ միջոց ռուսերէն լեզուով կարդալ գրել և խօսել	—	30
Սենքևիչ, Առանց դաւանանքի (վէպ), գ.	1	25
Նազարեթեան Տ. Հայ-ժողովրդական հէքեաթներ, մ. ութերորդ .	—	50
Մուրացան, Համասփիւռ (հէքեաթ), գ.	—	5
Փիրղալեմեան, Մի քանի օգտակար խորհրդածութիւններ, գ. .	—	20
Գոգոլ Ն. Վաղեմի կալուածատէրներ, գ.	—	30
Աղայեանց Ղ. Արութին և Մանուէլ երեք գիրք, հատ ի գ. . .	—	40
բոլոր 3-ի գ.	1	60
Երիցեան Ա. Ամենայն հայոց կաթողիկոսութիւն և կովկասու հայք 19-րդ դարում, Տփխիս 1894 թ. գ.	2	50